

ՕՐԱԳՐՔ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՓԱՍՏԱՍԻՐԱԿԱՒԹԵԱՆ

1862

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՑՔ.

ԱՄՓՈՓԵՑՍՐ 9.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

Եր.

ՄԱՐԳԱՐԷ ԿՆՈՋ ԱՆԷՆՔՓԸ. (Շարունակութիւն.) Ս. Նազարեանց. 105 — 143

ԹԷ ԻՆՉՊԷՍ Է ՑԱՌԱՋԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿԱԹՈԼԻԿԵԱՆ ԲԵՓՕՐՄԻ ԻՏԱԼԻԱՑԻ ՄԷՋ. Թարգ. Ֆրանսիականից. (Շարունակութիւն) Ս. Նազարեանց. . . . . 144 — 152

ՓԱՍՏԱՎԱՆ,

ВЪ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.

1862.

ՍԵՊՏԵՄԲԵՐ 1862 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

ՊԱՐԳԱՄԱՐԻ ԿՆՈՋ ԱՆԷԾՔԸ.

(Շարունակութիւն.)

ԳՕԴՈՒԱՆ ՀՈՐԲՈՐԴ.

ՏԱՍԵՐԿՈՒ ՏԱՐԻ ՑԵՏՈՑ.

Լուգովիկոս տասն և չորսերորդը, հինգ տարի էր արդէն, որ գնացել էր այս աշխարհից։ Ֆրանսիական ապգի աղնիւ բաժնի անէծք ու նզովքը ուղեկից էին եղել նորան դէպ ի գերեզման։ Ինչ մարդիկ նորա կառավարութեան օրերում պարարտացել էին, այն վատթար սիրելիքը պալատի և յիւսուսեան կարգի հոգևոր հայրերը ընծայեցին նորան մանկանուն Մեծ, պալատականների մէջ, որ ողբում էին ամենարոնակալ թագաւորի մահը, գոռալումեր և Մարկիզ Օրմնդը։ Իր տիրոջ մեռանելուց յետոյ, իսկոյն հրաժարուել էր նա իւր պալատական պաշտօնից և, մեծ հարստութեամբը բնակուած, տեղափոխուեցաւ Փարիզ։ Այս տեղ բնակում էր նա մի փառաւոր ապարանքի մէջ, որ գնել էր այն գանձերով որ, ինչպէս ասում էր նա, իւր պաշտպանի, Մենեհնօն տիկնոջ մեծահոգու թեան շնորհն էին — Մենեհնօն տիկնոջ որ, երբ նորա ամուսին այրը փակեց աչքերը, առանձնացել էր

սէն կիր մենաստանում։ Արդէն մի տարի էր, որ և այս կինը կոչուել էր Աստուածծոյ դաստատանի առաջև, պատասխանատու լինելու իր կեանքի գործերի մասին։ Ժողովուրդը արհամարհումէր յիշատակը այդ եղուխտաւոր կնոջ, բայց Մարկիզը օրհնումէր նորան իրրև իր բարերար։

Պարոն Օրսանժի մահուց յետոյ անցած ժամանակի միջոցին, արդէն ութ տարի պրիացած Մարկիզի Գուստաֆ անուն որդին չափ ու հասակ էր առել իրրև մի զօրեղ պատանի և ֆելխսիաէն հասել էր այն տարիներին որոց մէջ բանաստեղծքը պնդան սիրումեն համեմատել աղջիկները կիսով չափ բացուած վարդի կոկոնների հետ։

Մի ամառնային առաւօտու տասներորդ ժամն էր, երբ եղբայր ու քոյր մի փառաւոր սենեկի մէջ միմեանց հանդէպ կանգնած էին։ Գուստաֆ Օրմծնդը շատ պարզ, գրեթէ քաղաքացի կերպով հանգնուած էր։ Ֆելխսիաէն զարդարուել էր մի զմայլեցուցիչ առաւօտեան հագուստով։ Նորա մազերը դեռ ևս ցանած չէին սպիտակ փոշիով [1]), այլ առատ, զեղուն թուխ օղերով թափվումէին նորա սպիտակափայլ ուսերի վերայ։ Դա մի հրապուրիչ ապարանջ էր թէ կերպարանքով և թէ երեսի գծագրութեամբք որ բնութիւնը շնորհել էր նորան, բայց ևս առաւել, արտայայտութեամբ այն շնորհալից անմեղութեան, որ նորա մեծ, կապոյտ աչքերից խօսումէր։

Սենեկի դրան մօտ սպասումէր մի պարզ հագնուած ծառայ, կռան տակին մի մեծ պահարան թղթերի և նկարչութեան անօթներ։

Մանուկ աղջիկը փայփայօղապէս բռնել էր իւր, ութ տարի աւելի հասակաւոր եղբօր ձեռը։

Մի առատահնչիւն և հոգելից ձայնով խնդրեց նորանից, ասելով.

«Միրելի Գուստաֆ, դեռ ևս մի բաժանուր իր ինձանից. ինչո՞ւ այդպէս շտապումես»։

«Օրը գեղեցիկ է, պատասխանեց եղբայրը. ևս կամիմ արդիւնաւոր կացուցանել նորան։ Ալլև, արդէն անցել է տասն ժամը»։

«Ճանո՞ւթ է շատ» ասաց Ֆելխսիաէն ժպտմունքով։ Նա տակաւին հագնուել չէր անդամ կատարեալապէս։

---

[1]) Այս սովորութիւնը Լուդովիկոս տասն և չորեքտորդի թագաւորութեան օրերում յատուկ Ֆրանսիայում իրրև հնար փայլեցնելի մազերին։ Այս առանձին ճաշակը Լուդովիկեան դարու ճաւալուկեայ երեսպի բոլոր աշխարհներում, և այր ու կնամարդ, մեծ ու փոքր սկսան սպիտակ փոշով իրրև թէ փայլեցնել իրենց մազերը. այդ սովորութիւնը մինչև այժմ ևս ոմանց պէնտաէր մարդերի մէջ երևումէ։ Մ՛ը ճերմակ մազերի թէ շնամի չենք, եթէ գա էր պատուելի ծերութեան նշանակը. բայց պատանեկութեան մէջ սիրելի են մեզ սև կամ մուգ մազեր, որովհետև դոքա բնական են։ Բայց արուեստաւոր սուտ պատանեկութիւնը սպիտակ մազեր և — ամաչումեմ ասել — ծերութիւնը սև մազեր, համարումեմ մի անիծել բան. ամենայն հասակ պիտի ուենայ իւր յատկացուցիչ բնական կերպարանքը։ Ծ—ն, Հ—ր.

«Շ՛ատ բնական է. որովհետև դու կաքաւ ահանդիսից տուն եկար միայն առաւօտուն»։

«Ու քնելի մինչև արևի բարձրանալը» յաւելացրեց քոյրը ժպտելով։ Ո՛հ, ի՛մ փառաւոր քոյն էր։ Ես տեսայ հրաշալի երազներ։ Խոլորկաքաւահանդէսը դարձեալ պատկերացաւ հոգուս մէջ։ Ցիրաւի, ինչպէս պեղնցիկ էր այն տեղ — փառահեղ դահլիճը — մէք լոլ էինք տալիս մի լուսալեն ծովի մէջ — կամարդոդաչափ պրակիչ նուագածութիւնը — ես կարծեմէի, քաքաւելով դորա խաղերով, որպէս թէ թևեր ունէի։ Իմ փոքրութիւնս այն տեղ զարմանքի նիւթ էր։ Կարող չեմ՝ ուրանալ, որ այդ պատրաստից ինձ մեծ ուրախութիւն, և ապա, սիրելի Գուստաֆ —»

Աղջիկը յանկարծ դադարեցրեց իր պատմութիւնը, ըստ որում նկատեց որ երիտասարդ ազգայրը երևոյթ դարձուցել էր նորանից և խորասոյզ էր եղել մտքերի մէջ։

Ազգայրը այս անուշադրութեան պատճառով ստացաւ մի ամենագեղեցիկ կանացի ձեռնից մի հարուածք թշի վերայ և զդաստացաւ իր երազական ցնորքից այս բառերով.

«Գուստաֆ, դու անբաղդաբաղխար մարդ։ Ես պատմում՝ քեզ այնպիսի մեծակշիռ բաներ, նկարագրում՝ քեզ իմ բաղդաւորութիւնը և դու լսել անգամ չկամիս ինչ որ ես ասում՝»։

«Ներիր, սիրելի Ֆիլհելմէ, ասաց ազգայրը, համբուրելով քոյրի ձեռը։ Ես ունեմ իմ երազներս բաղդաւորութեան մասին»։

«Արդեօք դորա նմանպէս խայտաճամուկ են, ինչպէս իմերս, հարցրեց քոյրը»։

«Ո՛չ այդպէս ամենևին։ Այնու ամենայնիւ ոչինչ պակաս գեղեցիկ են նորա։ Դու, սակաւ ժամանակ է, որ մենաստանական ուսումնարանից վերադարձել ես դէպ ի հայրական տունը։ Բոլորը նոր է քո համար։ Դու անմեղ ուրախութեամբ տարուբերվում ես կեանքի ոստոստուն ալիքների վերայ»։

«Կարծեղ ես դու այդ մասին դատապարտել ինձ»։

«Ո՛չ ասեմ»։

«Այս նման եմ մի մանուկ թռչնակի։ Դա զուարթութեամբ թռչոտում՝ ճիւղից ճիւղ և, ուր նորան հաճոյ է, այն տեղ հնչեցնում՝ իր տաղերգութիւնը։ Այսպէս պիտի առնեիր և դու, բայց դու այժմ միշտ ծանրամիտ ես»։

«Այս ութ տարի առելի հասակաւոր եմ՝ քան թէ դու», մէջ բերեց Գուստաֆը։ Տարիների հետ միասին գալիս է և ծանրաբարոյութիւնը։ Այլ և ծաղկացաւը, որով ես չորս տարի յառաջ հիւանդացած էի, այնպէս տպաւորեցել է իմ երեսը, որ ես այն ժողովների մէջ ուր դու շարժվում ես, դեռևս կանանց մէջ կարող չեմ հաւանութիւն գտանել»։

Ֆիլհելմէն ժպտագին սպառնացաւ նորան մատով։

«Այնու ամենայնիւ Հաւտենղիա Բոհանը, երեւումէ, որ իւր սիրտը կորուսել է, և դորան գտել է այդ տգեղ պիսակոտ տղամարդը»։

«Մի՛ խօսիր իմ առաջև այդ ունայնասէր, հաճոյախնդիր կնոջ վերայ», ասաց Գուստաֆը։ «Նա իմ մէջ տեսանում միայն ժառանգը իմ հօր միլիոնների, աւելի ոչինչ։ Ես երբէք կարող չեմ սիրել նորան»։

«Որովհետև դու արդէն մի ուրիշ սիրելի ունիս, որին նուիրուում ես կեանքը», ասաց Ֆելիսիտէն կատակաբար. «Այսինքն Ճարտարապետութիւնը»։

«Այո՛, նա մի սիրելի է, որ կը մնայ ինձ հաւատարիմ մինչև մահու ժամը»։

«Ես սիրելու էի նորան, միայն թէ դա այդքան յաճախ չըաժանէր քեզ ինձանից։ Դու անդադար վազումես պարոն Լաւրենտիոսի հետ դէպ ի դաշտերը և անտառները և նկարումես ծառեր ու ապառաժներ։ Ի՛նչ կը լինէր, որ դու մնայիր այս տեղ և զբուցէիր իմ հետ։ Ես մի խորհուրդ ունիմ սրտիս մէջ. չկամիս դու լսել դորան»։

Գուստաֆը պատասխանեց այս հարցմանը մի անհամբերութեան նշանով և շրջահայեաց եղաւ, որոնելով Լաւրենտիոսը։

Նորա քոյրը նկատեց այս շարժողութիւնը։

«Գնա, դու տգեղ մարդ», ասաց քոյրը։ Ես տեսանումեմ, որ քո ծառերը և ապառաժները աւելի սիրելի են քեզ քան թէ քո քոյրը։

«Դու իմ վերայ բարկացած ես, Ֆելիսիտէ, որ ես այժմ հեռանում եմ քեզանից»։

Աղջիկը գրկախառնեց նորա փղոսկրեայ մէջքը և ամենևին մօտ քարշեց նորան դէպ ի ինքը։

Ֆելիսիտէն քրթմնջելով մի րոպէ կամ ձգեց իւր վարդակարմիր շուրթը։ Ապա շուտով փաթաթեց երկու ձեռքը նորա վզին և խօսեց առ ի սրտէ.

«Ես պիտի բարկացած լինէի, բայց կարող չեմ։ Ո՛չ, բարկացած չեմ, բայց շատ տրտմիլ կարող եմ, որ դու մեր հօրից յետոյ լինելով ինձ ամենասիրելի բանը երկրիս վերայ, այդպէս փախչումես իմ ընկերութենից»։

Աղջիկը շօշափեց իւր շրթունքով քունը բարձր, փայլուն ճակատը։

«Որպէս զի դու տրտում չլինես, այսօր երեկոյին, կրաւարանի մօտ ուշադրութեամբ ականջ կը դնեմ քեզ և դու պիտի հաւատայիր ինձ քո բոլոր փոքրիկ գաղտնիքը։ Բարեւ մնա, իմ փոքրիկ քաղցր Ֆելիսիտէ»։

Աղջիկը դպաց քունը համբոյրը իւր ձեռի վերայ. ապա շտապով դուրս գնաց սենեկից իւր ծառայի հետ։

Մանուկ աղջիկը դադարութեամբ նայեց նորա քամակից։

«Այո՛, նա բարեսիրտ է, նա սիրում ինձ», ասաց աղջիկը. և ինչպէս կարող էր պլատկէն լինել եղբօր ու քունը մէջ։ Աստուած այնպէս է սահմանել, որ նորա պիտի սիրեն միմեանց»։

Ա՛յս րոպէիս լսեց նա մի շաւաշիւն որ գալիս էր այն սենեկից որ կից էր ընդունելութեան դահլճին։ Նա թռաւ այն տեղ և թեքից ականջը դէպ ի դուռը։

«Իմ հայրս իւր առաւօտեան զբօսանքը այդու մէջ արդէն աւարտել է», ասաց նա։ «Առաւօտուն վաղ գրեթէ միշտ ուրախասիրտ է։ Եթէ պատմեի նորան իմ բաղդաւորութիւնը երեկեան օրի։ Որովհետև նա քնքշութեամբ սիրում ինձ, անտարակոյս ուրախանալու է դորա վերայ։ Կարող չեմ աւելի երկար փակել այդ բանը սրտիս մէջ, դա շատ սաստիկ ճնշում ինձ»։

Ձեռը սրտատեղի վերայ դրած, բացեց աղջիկը դուռը, գլուխը ներս կոխեց և հարցրեց.

«Համարձակ է ինձ գալ քո մօտ, սիրելի հայր»։

Պատասխանը եղաւ ստորասական. աղջիկը ողջոյն տուեց հօրը, համբուրելով երկու թուշերը։

Մարկիզ Օրմենը, այժմ Լիսան տարեկան հասակի մէջ, աւագ և լիամարմին կերպարանքով, հանգստացաւ մի նստարանի վերայ և քարշեց Ֆելիսիտէն դէպ ի իւր կողը։ Աչնուհետև փայփայեց նորա մազերը և գբգռուեց նորան այնպէս, ինչպէս սովորութիւն է գթութիւն մի շատ աւելի մանուկ երեխայ։

«Ո՜հ, ինչպէս գեղեցիկ ես դու դարձեալ, իմ սիրական», ասաց հայրը։ Դու գիշերը անքուն անցուցել ես պարահանդէսի մէջ և այնու ամենայնիւ ծաղկումեն վարդերը քո երեսի վերայ։ Ո՜հ, դու իմ ամենասիրելի երեխան ես և կը լինես, նպատակի նմանատիպը քո լուսահոգի մօր։ Վրպիսի երանութիւն զգալու էր նա, եթէ կարողանար տեսանել քեզ այնպէս, ինչպէս ես»։

Երբ որ Ֆելիսիտէին յիշեցնումէին իւր մայրը, արտասուքը միշտ կոխումէր նորա աչքը։ Որչափ ևս զուարթ ու թեթև էր նորա արիւնի խառնուածքը, այնու ամենայնիւ ունէր նա աւելի խորին զգացողութիւն, քան թէ առաւել մեծ մասը աղջիկների վերին ժողովրդականներից, այն ազնականուած դարումը, երբ երեխայական սէրը դարձել էր գրեթէ մի լոկ ճարտասանական ծաղիկ։ Նա գլուխը դրեց հօր կուրծքի վերայ և ասաց կիսաշարժ ձայնով.

«Այ՛, իմ մայրն էր մի հրեշտակ, յաւաչ քան թէ վերափոխուեցաւ դէպ ի երկինք։ Աստուած տայ ինձ, որ լինիմ այնպէս, որպէս նա. այնուհետև բոլոր բարի մարդերի սէրը ճանապարհակից կը լինի ինձ կեանքի մէջ»։

«Ամէն, իմ զաւակ», ասաց Մարկիզը հանդիսաւոր ձայնով և միլիոնաթեանի սեղմեց նորա գլուխը կուրծքին։

Միրելի հանգուցեալ Լիշատակին նուիրուեցաւ մի կարճատև լռութիւն, ապա Մարկիզը տուեց խոստակցութեանը մի ուրիշ դարձուած։

«Որչափ ես հաճ ու հաւան եմ քեզ», ասաց Հայրը, «այնչափ ևս տհաճ ու անհաւան եմ քո եղբօրը։ Նա իմ արիւնի — զաւակն է, բայց վարվելմ չէ որպէս իմ սրտի զաւակ։ Փոխանակ ընկերակից լինելու այնպիսի ժողովների, որ պատշաճաւոր են նորա տոհմին և նորա պաշտօնի վիճակին մի օր, նա կենակից է անաստիճան և աննշան մարդերի։ Դոցա ասումն նա ճարտարապետ է։ Ի՛նչ բան է մի ճարտարապետ։ Մի մարդ, որ արծաթի համար նկարագրումն պատկերներ կտաւի վերայ։ Արդեօք այդ մարդիկը ընկերք էին իմ որդուս, գալոց մարկիզին, որ, ինչպէս իմ ցանկութիւնն է, մի օր պիտի կշռի ու ծանրութիւն ունենայ պալատի մէջ։ Ո՜հ, այս ճարտարապետութիւն ասած բանը — ինչպէս ատելի է ինձ դա։ Դորանով Գուստաֆը օտարացել է իմ սրտին և իւր կոչմանը. այդ ճարտարասիրութիւնը, Աստուած գիտէ, թէ դեպ ի ինչ տխմարութիւնք մտրբեցնելու է նորան, եթէ ևս որոշած չլինէի ազդուլապէս վերջ դնել նորա ծիծաղելի ձգտողութեանը»։

Ֆելիսիտէն սրեց ականջները։

«Ի՛նչ էք որշել դուք Գուստաֆի մասին, հարցրեց նա»։

Մարկիզը բարձրացաւ նստարանից. Ֆելիսիտէն նորա հետ միասին։

«Ձս կամիմ տմն անացնել նորան», ասաց Հայրը։

«Որչ հետ, սիրելի հայր իմ»։

«Յոհան կոմսի աղջկայ հետ»։

«Հորտենզիայի՞ հետ»։

«Այո՛, իմ զաւակ»։

«Ձս Գուստաֆը յանձնառո՞ւ է»։

«Նորա հարսնարաժինքը կացուցանում երկու միլիոն։ Մի՞ թէ կարող էր նա աւելի վեր ձգտելցուցանել իւր ցանկութիւնքը»։

«Ըմմ։ Ճարտարապետ մարդիկը սիրումն շատ անգամ գաղափարականը (իդէալը) — և Հորտենզիան —»

Մարկիզի երեսը մեայլուեցաւ։

«Մի հայր պարտական է հոգալ իւր որդու բաղդաւորութեան համար»։ Աստիճան ու հարստութիւն են կեանքի գերագոյն բարիքը։ Ընդնայլով դորանց, զգումենք մեր անձը բարձր բարձրացած ժողովրդի վերայ, որ սահմանուած է իրրև էշ բեռն կրելու և զկանքի տանելու։ Աղքատութիւնը մի նուաստութեան համար է արդէն մի անբաղդութիւն, բայց աղնուականների համար մի և նոյն բանը, ինչ որ նախատինքը։ Ես, իմ զաւակ, մի պարպիսի կեցութեան փորձը առել եմ։ Իմ շրջմունքս շատ տարի յառաջ կարօտութեան բաժակը դատարկել են մինչ մրուրը։ Ես մի աղքատ աղնուական էի դաւառումը, իմ կալուածքը իմ պապերի և հայրերի ձեռքով բեռնաւորած էին պարտքերով։ Պարտատէրքը անողորմաբար արտաքսեցին ինձ իմ հայրենական ժառանգութենից։ Տասերկու տարի է միայն, որ ես երանելի մարկիզուհի Մենմենտնի շնորհով ունիմ այն ստացուածքը, որոց նկա-

մուտքից ապրումենք մէք, մեր կարգին արժանաւոր կերպով։ Մեր գոյքը պիտի դնեմ ես բազմապատկուի իմ զաւակներուն ձեռքով։ Քո եղբայրը տխմար է, եթէ կը խոտորուի այն շաւղից, որ ես բացել եմ։ Ցոյս ունիմ, որ դու, իմ Ֆելիսիտէ, պլապէս ես մնածուս»։

Մանուկ աղջիկը գլխով արեց, ժպտալով։

«Լաւ, հայր իմ, ես կը ցանկայի հարուստ, անչափելի հարուստ լինել — այնուհետեւ ինջոյք ինջոյքի վերայ կը տայի, կը զարդարէի իմ անձը ամենաթանկագին կերպով, կը կրեի մի թագ իբրեւ թագուհի»։

«Վեց հոյակապ ապարանքներ շինել տալ, դրախտի նման այգիներով շրջապատած», յաւելացրեց մարկիզը։

«Լաւ, իմ հայր։ Բայց արծաթը գործ կը գնեմ ես և ուրիշ, աւելի գեղեցիկ խորհուրդներով։ Իմ հարստութեամբս կը սրբեմ անթագդների արտասուքը և նոցա ցաւը կը փոխարկեմ ուրախութիւն»։

Նազելի աղջկայ աչքերը շողշողեցան մի գերօրինակ փայլուն թեամբ, արտասանելով այն խօսքերը որով բացայայտուեր նա իւր սրտի ամենամաքուր, ամենաճշմարիտ զգացողութիւնքը։

Երեկը դարձեալ երեւեցաւ նորա հօր երեսի վերայ։ Իւր աղջկայ ճաշակատը համբուրելով, ասաց նա.

«Ես գովում եմ քո ազնիւ դիտաւորութիւնքը, իմ զաւակ։ Բայց դրանց իրագործելու համար, որպէս արժան էր, տակաւին բաւական նշանաւոր չէ մեր գոյքը։ Ա՛յս պատճառով, եթէ դու քեզ ընտրուեիր մի ամուսին այր, ապա ուշադիր եղեր բուն բանին, այսինքն ստիճանի ու հարստութեան, քան թէ դուրսի կճեպին, այսինքն մանկութեան ու գեղեցկութեան»։

Ֆելիսիտէն ժպտեցաւ։ Հայրը խօսք էր բացել մի նիւթի վերայ, որ յարակցութիւն ունէր այն գաղտնիքի հետ, որ սոյն այս ժամուս կամենաւ մեր աղջիկը հաւատալ նորան։

«Օր երկու ձեռքը բռնելով և քնքշութեամբ նայելով նորա երեսին, ասաց աղջիկը»։

«Բայց գեղեցիկ է, երբ որ կճեպը և նորա մէջը համեմատ են միմեանց։ Այսպէս չէ՞, հայր իմ»։

Մարկիզը գլխով արեց։

«Ի հարկէ, իմ սիրական։ Բայց այդպիսի հարսնախօսք շատ սակաւագիւտ են, որպէս փիւնիքս թռչունը»։

Ֆելիսիտէն սեղմուելով հօրը, պատասխանեց ճարտար լեզուով.

«Ո՛վ, կան դեռ ես այդպիսի առասպելական թռչուններ, եթէ ոչ փարիզում, գոնեայ շրջակայքում։ Ինչպէս էր կարծում, եթէ մի այդպիսի թռչնակ փայլուն թեւերով արդէն թռթռալով մօտեցած էր ինձ»։

«Լ՛ոյ, այո, այդպէս է, խօսքը յառաջ տարաւ աղջիկը, երբ հայրը խոժոռ աչքերով նայումէր նորան»։ Թոյլ տուեցէք ինձ, ասել ձեզ նորա անունը։

«Լ՛սա, իմ ազնիւ զաւակ»։

«Նորա անունն է — Լուդովիկոս Քուրբիեր»։

Մարկիզը ձեռը դրեց ճակատին, որպէս թէ կամենումէր մի բան մտաբերել։

«Անունը չէ ինձ ամենևին օտար» պատասխանեց նա։ «Եթէ սխալվում չեմ, Բարօն Փօրտիբրանը կէս տարի յառաջ յանդիման կացուց ինձ մի պարոն, Քուրբիեր անուն, մի ժողովի մէջ որ մեծարել էր մարկիզ Մոնտանժը։ Որչափ կարող եմ մտաբերել, դա մի շատ երկտասարդ, սիրուն տղամարդ է։ Նա ունի —»

«Մի բարակ կերպարանք», շուտով ներս բերեց Ֆելիսիտէն, «Թուխ, փայլուն աչքեր, բարձր ազնիւ ճակատ, նուրբ կազմած շրթունք և ղարմանալի ատամներ»։

Ինչպէս երեխան մի սիրելի խաղալիք, նոյնպէս նկարագրեց աղջիկը Քուրբիերի կերպարանքը գլխից մինչև ոտք։

Մարկիզը նորա սրտի բաղցր գաղտնիքը ընդունեց պայծառ դէմքով։

«Լ՛սա երիտասարդի հայրը բնակումէ Վենէսենի մօտ։ Ամրոցը փառաւոր անտառով միասին և հողատարհներով արժէ միայն, մի միլիոն։ Պարոն Փօրտիբրանը, որ նորան յանդիման կացուց ինձ, պատմեց ինձ թէ ալևոր պարոն Քուրբիերը մի տարի յառաջ վերադարձել է Ֆրանսիա խաղիայից ուր կացած է շատ տարիներ, և թէ գնել է յիշեալ կալուածը Ֆրանսիայի մօտակայքում, որ այն տեղ խաղաղ ու հանգիստ անցուցանէր իւր կեանքի մնացած օրերը։ Այլև, Փօրտիբրանի ասելով, ունի նա մեծ արծաթի, բայց դու կամէիր պատմել ինձ նորա որդու մասին»։

«Հայտնի է ձեզ, որ ես երեկ իմ մերաքուեր, Բեսօնէի հետ, կոմս Բոհանի պարահանդիսումն էի։ Այն տեղ կրկին հանդիպեցայ պարոն Քուրբիերին։ Մենք շատ կաքաւեցանք այն տեղ և յաճախ միմեանց հետ։ Ինչպէս սովորութիւն է, պարահանդիսի մէջ լինումեն աղատ միջոցք. այդպիսի միջոցներում լինումէ խօսակցութիւն կանանց ու տղամարդկանց մէջ։ Եւ պարոն Քուրբիերը զրուցումէ ամենևին գեղեցիկ։ Ո՞վ, մի անհաւատալի բան է, թէ ինչպէս մեղմ, ինչպէս գրաւիչ հնչումէ նորա ձայնը — և հոգևոյց է նա. մինչև անգամ ասաց ինձ, թէ կարող էր ոտանաւորներ գրել»։

«Այդ ինչ էր ձեր խօսակցութեան բուն, գլխաւոր նիւթը»։

Մի աւելի զուարթ կարմրութիւն, քան թէ բնութիւնը արդէն տուել էր նորան, յանկարծ պատեց նորա թշերի վերայ։ Աղջկայ երկար ու թուխ թերթերուկները ցած թողուեցան, որ շուտով դարձեալ բարձրանան։ Նա կարող էր և կամէր ապաքէն ամենայն բան հաւատալ իւր հօրը։

«Ա՛յ, թէ ինչ նիւթի վերայ էր մեր զրոյցը խափաղէս, չգիտեմ այլ ևս ճշդապէս, ասաց աղջիկը»։ Նորա հայեացքի վերայ մռայլայ ամենայն բան. նա թափանցեց աչքերից իմ սրտիս մէջ, վաղեցրեց արիւնը դէպ ի թուշերս — դող ձգեց իմ մէջ և այնու ամենայնիւ քաղցր էր ինձ, անպատմելի քաղցր։

Ֆելիսիտէն լուեց։ Նորա կենդանի երևակայութիւնը կախարդողապէս նկարեց նորա հոգու առաջև երիտասարդի պատկերը։ Նա կարծումեր գարձեալ հանդիպել նորա հայեացքին, և նորա աչքը փայլեցաւ սիրոյ առաջին մոլութեան մէջ։

Մարկիզ Օրմոնդը քաղցր հաւանութեամբ, միանգամայն և շահասիրութեամբ զննումեր իւր դուստրը։ Նորա սիրոյ խոստովանութիւնը անհաճոյ չէր, ենթադրելով թէ ծաղիկը շուտով կը հասանէր և պտուղ կը բերէր, պսինքն այս փոխադարձ յօժարութենից կը յառաջանար մի ամուսնութեան դաշն որ յաւիտեան կ'ապահովէր բաղդաւորութիւնը իւր աղջկայ որին զրեթէ իբրև կուռք պաշտումեր նա։

Նա կամեր աւելի բան իմանալ և հարցրեց.

«Մի՞ թէ կարող չես դու այլ ևս մոռանալ ձեր խօսակցութեան որ և իցէ բնաբանը»։

Ֆելիսիտէն աջ ձեռի ցուցամատը դրեց սպիտակ ճակատի վերայ.

«Կացիր. ահա գալիս է միտքս» ձայն արձակեց նա։ «Մեք խօսում էինք Խաղիայի վերայ։ Պարոն Քուրբիները շատ բան պատմեց ինձ այս փառաւոր աշխարհի, նորա մրտենի և նարընջենի անտառների, նորա ճարտարապետների վերայ։ Նա իւր հօր և քուերը հետ միասին շատ տարիներ եղած է այն տեղը»։

«Ես դու հաւանեցաիր նորա պատմութիւններին»։

«Անկնակէս չափից դուրս, որ պատահանեցի նորան. Պարոն Քուրբիեր, մեծ ուրախութիւն կը պատրաստէիք ինձ, եթէ աւելի բան պատմէիք ինձ այդ, Աստուծոյ օրհնած աշխարհի մասին, և այն, իմ հօր ապարանքում, ուր նուագածութիւնը մնդրուս ականջը գրաւում չէր կիսով չափ»։

«Վհո արածը մի ուղիղ հրաւիրանք էր», ձայն տուեց Մարկիզը։

«Ո՛չ. նա չտհաճեցաւ այդ բանի վերայ։ Նա քաղցրութեամբ ընդունեց այդ հրաւիրանքը։ Այսօր արդէն սպասումեմ նորա այցելութեանը»։

Հայրը սպառնացաւ նորան մատով։

«Ֆելիսիտէ, դու վարուել ես ընդդէմ մեծատուների սովորութեանը։ Հրաւիրանքը պիտի լիներ ինձանից»։

«Ներդպէս», ասաց նա. «Ա՛յ, ես սխալուել եմ։ Սակայն նորա այցելութիւնը կը պատրաստէ ձեղ ուրախութիւն, որովհետև ինձ պատրաստում ուրախութիւն։ Դուք ժպտո՞ւմէք. կամի ասել, թէ դուք հաւան էք։

ՈՂ, ես գիտէի այդ։ Ձեզ անհատական է, թէ ինչպէս ախորժելի է ինձ այն հին, հոյակապ աշխարհը»։

«Տակաւին ամենևին երեխայ» քթի տակ խօսեց Օրմօնդը։ «Ո՛վ, Թող երկնային տեսչութիւնը հսկէ նորա վերայ, և երբէք մի խաւար ստուեր չպղտորէ նորա պայծառ կեանքի արևը»։

Այս վերստին դարձուց դէմքը դէպ ի աղջիկը։

«Միտ դնելով այն բանին, ինչ որ դու պատմել ես ինձ երիտասարդի մասին, դժուար թէ այսուհետև կը մնար խօսակցութիւնը Խտալիայի լոկ նկարագրութեան վերայ»։

«Ինչո՞ւ այդպէս, հայր իմ», հարցրեց Ֆելիսիտէն»։

«Անկութիւնը շատ անգամ շտապող է և անխոհեմ։ Եթէ նա համարձակուէր խոստովանել քեզ—»

«Ծո՛ւ նա ինձ սիրում է»։

«Լա՛ւ։ Ապա ինչ պիտի պատասխանես»։

«Ես ասելու էի. սիրելի պարոն Քուրրիեր, այդ բանը նկատել եմ ես երեկեան կաքաւահանդէսում»։

«Ըդարև, դու մի սակաւագիտ, անկեղծ աղջիկ ես»։

«Անկեղծութիւնը մի առաքինութիւն է, իմ հայր։ Պիտոյ է անկեղծ լինել ամենեցուն, մանաւանդ նոցա հետ, որ մեզ սիրելի են։ Այնուհետև պ. Քուրրիերը, անտարակոյս, խելքը կը կորցնէ ուրախութենից. նա կը շտապէ իմ սիրելի Հօր մօտ և կը խնդրէ նորանից, գթալ նորան և տալ ինձ նորան ամուսնակից»։

«Ես դու մոռածո՞ւմես, թէ այդ բանը լինելու է այսօր իսկ»։

«Այժմ թէ հետ կը դներ նա գործը մինչև էգուց»։

«Ես ես—ինչ ունէի պատասխանելու»։

«Դուք կը մեռցուցանէիք նորան ձեր աչը, կամ, աւելի լաւն ասեմ, կը գրկախառնէիք նորան և կ'ասէիք». բաղդատութեցէք իմ փոքրիկ Ֆելիսիտէն։

«Կացիր, իմ զաւակ. պարոն Քուրրիերը, ինչպէս ասում են, տակաւին շատ մանուկ է»։

«Նորա հասակը հաթցրած չեմ, սիրելի հայր։ Եթէ կը հրամայէք, կը հարցանեմ իսկոյն, երբ որ կը գայ»։

«Այդ բանը ինձ Թող, իմ զաւակ», ասաց Մարկիզը, վեր կալնելով նորա ձեռը։ «Տե՛ս, իմ աղջիկ, մեզ համարձակ չէ չափից դուրս շտապել։ Քուրրիերեան ազգատոհմի անունը բարեհռչակ է։ Ինչքան ես գիտեմ, այս աշխատական տունը շատ իրաւամբ Բրետայն գաւառից և ազգականութեամբ իր նախահարքը խաչակիր պինդուրութիւնների ժամանակից։ Ինձ ընդունելի էր այդ ամուսնակցութիւնը։ Բայց մինչև ալևոր պարոնը սովորական ձևով չհնդրէ ինձանից քո հարսնութիւնը իր որդու համար, քիչ համարձակ չէ երիտասարդին քաջալերութիւն տալ։ Որևէն լսէր, թէ ինչ պայմանով կա-

րող ես դու ընդունել նորան այս տեղ։ Երբ որ նա համարձակուի խոստովանել քեզ իւր սէրը, ապա օգնական կը կանչես դու քեզ քո կանացի արժանաւորութիւնը։ Թո՛ղ քո կոլմից մի խիստ հայեացք դարձուցանէ նորան դէպ ի քաղաքավարութեան սահմանքը։

Ֆելիսիտէն յառաջեց կամաց։

«Պիտո՞յ էր ինձ խիստ լինել. ո՜հ, այդ բանը կ'արժէ ինձ շատ անձնայաղթութիւն։ Ինձ հարկաւոր էր կեղծաւորութիւն յանձն առնուլ, բայց ես ուսած չեմ դորան»։

«Աւելի պիտի լինի», ասաց Օրմօնդը ծանրութեամբ։ «Կամ թէ, որ աւելի լաւ էր, երբ որ մի խօսք սիրոյ մասին դուրս կը գայ նորա բերանից, դու կը քարշես վանդակը։ Մի ծառայ կը կանչէ ինձ քո մօտ։ Ապա կը շտապեմ ես քեզ օգնելու։ Այժմ գնա դու և հաղնուիր, որ ընդունես քո հիւրը։ Մտածիր, եթէ այժմ ներս մտանէր պարոն Քուրրիերը —»

Ֆելիսիտէն չմնաց մինչև աւարտու էր խօսքը։ Նա համբուրեց հայրը և ձայն արձակեց.

«Աղջիդ է ձեր ասածը։ Եւ ինձ պարտ է ընտրել ամենագեղեցիկ հագուստը, որ ունէի ես։ Իմ սենեկային սպասաւոր կինը Անտոնիա ունի ճաշակ. նա թո՛ղ խորհրդակից լինի ինձ։ Եւ մաղերիս զարդարանքի մասին պիտի ասել, որ պարոն Քուրրիերի երեկեան խօսքին միտ դնելով, նա սիրտմէ բնական ծաղիկներ մի կնոջ մազերի մէջ։ Երեկ կրտմէի ես երեք դալար վարդեր — ես կամիմ այսօր նոյնպիսի միտնջ դնել մազերիս մէջ։ Ես կը շտապեմ զարդարուիլ։ Բայց եթէ նա գալ յառաջ քան թէ պատրաստ էի ես, ապա դուք ընդունեցէք նորան շատ քաղցրութեամբ, որ նա չհեռանար իսկոյն, և որպէս զի հարկաւոր չլինէր ինձ քարշել զանգակը, իմաց տալու սիրելի հօրս»։

Մարկիզը գլխաշարժ սրտով նայեց աղջկայ քամակից։

«Լաւ, դու պիտի բաղդաւոր լինես, իմ սիրելի զաւակ», ասաց նա։ Ինչ որ ես մի ժամանակ մեղանչել եմ քո մօրը, կը փոխարինեմ նորա զաւակներին։ Ես կամիմ փորձել երիտասարդը, կամիմ ծանօթանալ նորա հօրը և եթէ այդ տղմն արժանի գտանեմ իմ Ֆելիսիտէին, ապա կ'օրհնեմ ամուսնութեան գաշը, կ'օրհնեմ ամենայն սրտով»։

Նա մի րոպէ շունչ առաւ և բնեռեց աչքը սենեկի առաստաղի վրայ, յետոյ ասաց.

«Երանի՜ թէ լուսահոգի մայրը կարողանար օրհնել իւր զաւակը։ Նորա օրհնութիւնը բերելու էր աւելի լաւ պտուղներ, քան թէ այս ձևը —»

Մի սարսափ դղրդեց նորա ներքինքը։ Նա իւր աջոյ ձևը կծկած դրեց կուրծքի վերայ և քթի տակ խօսեց կերկերաձայն.

«Լռուա, թշուառական դու, լռուա։ Մի պատուհիր դու ինքդ անցած օրերի երկաթի ծածկոյը. թո՛ղ դորա հանդարտ մնան, այդ գևերը, որ մի

ժամանակ պղ ծածկոցի տակ քրքրումէին։ Չափից դուրս զարհուրելի կը լինէր, եթէ վերադառնային դռքա։ Դռքա մի ժամանակ բաւական տանջել են ինձ երկար անքուն գիշերների մէջ։ Ես երկաթի կամքի ջօրութեամբ սանձահարել իմ զորանց, Դռքա չպիտի դառնացնէն իմ գալոց օրերը»։

Մարկիզը մի կարճ միջոց մեծ մեծ քայլերով անց ու դարձ արեց, ապա դիմեց դէպ ի պրասելցները որ դրած էր պատուհանին շատ խիտ մօտ, գրեց մի երկար նամակ կոմս Րոհանի վերայ, որոյ դուստրը մտադիր էր ամուսնացնել իւր որդու հետ։ Նամակը պատկանումէր այս գործին որ նորա համար մեծ հոգալիք էր. պատճառ, Րոհանի աղգատոհմը շատ սիրելի էր թագաւորութեան հոգաբարձու դուքս Փիլիպպոս Օրլէանեանին և Գլեօսի կարդինալին որ տասնամեայ Թագաւոր Լուդովիկոս տասն և հինգերորդի դաստիարակն էր։ Ծերունի կոմսի գործակցութեամբ կարող էր Գուստաֆը մի երևելի պաշտօն ստանալ պալատումը, և, Թէպէտ տարիներից յետոյ, հասանել բարձր արժանաւորութեան աստիճանի։ Ուրեմն ամուսնութիւնը անպատճառ պիտի գլուխ գար։

Հաղիւ Թէ կնքել էր նամակը, և ահա սպասաւորը զարդարուն գուստով ներս մտաւ և իմաց տուեց պարոն Լուդովիկոս Քուրբիերի գալստեան։

Մարկիզը շուտով բարձրացաւ տեղից։

«Ուրաջնորդիր պարոնին դէպ ի ընդունելութեան սենեակը» հրամայեց նա։ Յետոյ յանձնեց նամակը ծառային։

«Այս գրուածը կոմս Րոհանի վերայ, պիտոյ է իսկոյն տեղ հասանի»։

Սպասաւորը հեռացաւ։

Պարոն Օրմօնդը դիմեց դէպ ի դահլիճը, ցանկանալով իւր սիրական աղջկայ ընտրածը գտանելու և իւրեան հաւանելի։ Այնուհետև պիտի գոնեայ այս ամուսնակցութիւնը անտարակոյս հաստատուէր։

Քրդէն պատանի Քուրբիերի տեսութիւնը, որ յառաջուց հարևանցի հանդիպած էր նորան, մի ախորժելի տպաւորութիւն գործեց Մարկիզի վերայ։ Սա տեսաւ իւր առաջև մի բարձրահասակ, նրբակազմ երիտասարդ, որոյ կերպարանքի մէջ ոչինչ արատ չկար, բաց ի նորա գունէ շատ մանուկ լինելուց. պնու ամենայնիւ երևումէր նա ուելի հասակաւոր, քան Թէ իսկութեամբ էր։ Նա կարող էր համարուիլ տասն և ինն տարեկան պատանի, բայց տակաւին չէր հասած տասն և եօթնին։ Նորա հպատուտը համեմատ էր նորա աղգատոհմին և իւր հօր հարստութեանը. նորա վարքը ըստ բաւականին ազատ, որ և շատ յարմարաւոր էր նորան։

Ետոր գլուխ տալով Մարկիզին, ասաց նա.

«Ես պարծանք ունիմ տեսանել իմ առաջև պարոն Մարկիզ դ'Օրմօնդը»։

«Այդպէս է իմ անունը», պատասխանեց Ֆելիսիտէի հայրը։ «Իմ դուստրը արդէն տեղեկութիւն է տուել ինձ ձեր այցելութեան մասին։ Խընդրեմ շնորհ ցուցանել և նստել»։

Նա մօտ շարժեց երիտասարդին մի աթոռ։

Երկոքեանքը հանգստացան։

Լուդովիկոս քուրմիները լաւ գիտէր, որ կարգը նորանն է սկսանել խօսակցութիւնը։ Բայց զբաղուած լինելով Ֆելիսիտէի վերայ, շփոթուեցաւ և դժուարացաւ։ Նա լաւ էր, չգտանելով ոչինչ պատշաճաւոր խօսքեր սկսանելու զրոյցը և ցած էր նայում իւր առաջև։

Մարկիզը, որ քաղցր հայեացքով ընդունէր երիտասարդը և իւր սրբտումը մտածումներ թէ իւր աղջիկը արել չէր մի վատ ընտրութիւն, յառաջամտոյց եղաւ.

«Ինչպէս լսումեմ, Դուք յաճախ լինումէք մեր ժողովների մէջ փարիզում։ Բայց ինչ է պատճառը, որ Ձեր պարոն հայրը արժանացնում չէ մեզ իւր անձնական ծանօթութեանը»։

«Պարոն քուրմիները ալեւոր է արդէն», ասաց Լուդովիկոսը։ «Նա սիրում միայնութիւնը, և որովհետև իմ քոյրս հակամիտուած դէպ ի նոյն բանը, այդ պատճառով չէ զգում նա ոչինչ տաղտկութիւն»։

«Պատմումեն, թէ Ձեր քոյրը թաքուցնում իւր գեղեցկութիւնը տրտմութեան զգեստի տակ»։

«Այդպէս է» պատասխանեց Լուդովիկոսը։ «Նա կարծում էր այդպիսի օրինակով պատուել յիշատակը մեր աղնիւ մօր, որոյ մահը ընկղմել է նորան տխրամտութեան մէջ»։

«Նայց Դուք երևումէք ինձ աւելի սակաւ տխրամիտ —»

«Որպէս մի բարի որդի արտասուել եմ իմ մայրը խորին և առ ի սրբտէ կերպով։ Բայց իմ տնկակից ուրախամտութիւնը շուտով փարատից տխրութեան ամպերը որ պատել էին իմ մանկութեան վերայ։ Նա ուրախ եմ մանաւանդ, քանի որ եկած ենք Փրանսիա։ Փարիզը այնքան գեղեցիկ է — ամենայն տեղ ընդունումեն ինձ յառաջամտոյց լինելով (ինձ հանդէպ պատիւ) —»

«Ձեր աղգատոհմը կրումէ մի աղնիւ անուն» խօսք ներս ձգեց Մարկիզը։ «Եւ ինձ կը լինէք դուք միշտ ընդունելի։ Շնորհեցէք մեզ, ովքան յաճախ հաճոյ է Ձեզ, ձեր այցելութեան պատիւը։ Դուք կարող էք — Աստուած Ձեր հետ — հոգով առաջնորդել իմ Ֆելիսիտէին դէպ ի Հռոմ և Նէապօլիս»։

Երիտասարդը կարմրեցաւ։

«Այո՞ թէ Ձեր պատուելի աղջիկը մտանաւորել է Ձեզ, պարոն Մարկիզ»։

«Ձեր խօսակցութիւնը երեկեան պարահանդէսի մէջ»։

«Խոլը՞րը»։

«Ա՛յո՛, խոլե՛րը» պատասխանեց Մարկիզը ժպտալով։

Երիտասարդի աչքերը լցցավառուեցան ուրախութենից։

«Ես Դուք բարկացած չէ՞ք իմ վերայ, պարո՛ն Մարկիզ»։

«Ի՛նչ պատճառ ունէի բարկանալու»։

«Ո՛վ, դուք անպատմելի բաղդաւոր էք կացուցանում ինձ»։

«Ես շատ ուրախ եմ դորա վերայ, պարո՛ն Քուրբիեր»։

Լուդովիկոսը շուտով բարձրացաւ տեղից, Մարկիզը նըշանակս։ Սա հարցանելով նպատակ պատանու վերայ։

Պատանին վեր կալաւ հասակաւոր մարդու ձեռը և սեղմեց իւր շըրթունքի վերայ։

«Ներեցէք ինձ, պարո՛ն Մարկիզ, որ ես այժմ արդէն համարձակ-ւում եմ որդիական քնքշութեամբ մեծարել ձեզ։ Բայց ձեր քաղցր ընդունելութիւնը — իմ երեսն և եռանդն սիրտը — ո՛վ, ասացէք ինձ, կարո՞ղ եմ խոստովանել ձեր պատուելի աղջկայ առաջև թէ ես սիրումեմ, պաշտումեմ նորան իբրև մի երկնային հրեշտակ»։

«Ո՛չ, այդ բանը համարձակ չէ ձեզ, պարո՛ն Քուրբիեր», ասաց Մարկիզը ծանրաբարոյ ոճով։

«Ո՛վ իմ Աստուած, ուրեմն խաբուած եմ ես, եթէ յուսացել էի—»

«Լսեցէք ինձ հանդարտութեամբ, ով երիտասարդ», ասաց Մարկիզը։ «Յառաջ քան թէ իմ ֆելիսիտէին յայտնապես հրատարակել էիք ձեր սէրը, պիտոյ է ինձ խնամել, արդեօք Ձեր պարոն հայրը համաձայն է ձեր սրտի ցանկութեանը։ Այս մասին խօսե՞լ էք նորա հետ»։

Լուդովիկոսը դէպ ի գետին նայեց և կակազեց.

«Ո՛չ, այդ մասին արդարև խօսել չեմ հօրս հետ. բայց Պարոն Քուրբիերը շատ քնքուշ սիրով սիրումէ ինձ։ Իմ սիրտս վկայումէ, որ նա մի հարսըն, որպիսի է Օրմնդի նազելի դուստրը, կ'ընդունէ մեծ ուրախութեամբ։ Այսօր իսկ կը պատմեմ նորան լոլորը»։

«Որովհետև դուք այդքան հաւատի էք, որ նա տալու է իւր հաւանութիւնը», կարծումէր Մարկիզը, «ապա պէտք չէր յապաղել և ոչ մի րոպէ»։

«Ուղի՛ղ է Ձեր ասածը, պարո՛ն Մարկիզ, և ես խոհեմ կ'երեւամ»։

Լուդովիկոսը պրուխ տուեց, որ հրաժարուի։ Նա դարձաւ դէպ ի դուռը, բայց դրանը մօտեցած, յետ դարձաւ։

«Ո՛չ, ոչ. ես կարող չեմ գնալ այս տեղից, առանց Ֆելիսիտէին տեսած և խօսած լինելու։ Ո՞չ ապաքէն նա սպասումէ ինձ։ Խնդրումեմ և աղաչումեմ Ձեզ, պարո՛ն Մարկիզ, շնորհեցէք ինձ մի կարճատև խօսակցութիւն նորա հետ»։

Մարկիզի երեսը ծանր կնճռոտներով ծածկուեցաւ։

«Խիստ կարդի ու պատշաճի օրէնքը ներում չէ ինձ լցուցանել ձեր ցանկութիւնը», ասաց նա։ Բայց դեպ ի մանուկները պիտոյ է ներողամիտ լինել։ Ա՛յ, ես թոյլ եմ տալիս ձեզ խօսակից լինել Ֆելիսիտէի հետ, բայց մի պայմանով միայն։

«Խնդրեմ ասել այդ պայմանը, բարեգութ պարոն»։

«Խօսակցութիւնը Ձեր ու իմ աղջկայ մէջ պիտի լինի միայն սովորական նիւթերի վերայ»։

«Դուք դնում էք իմ սիրտը մի ծանր փորձի տակ։ Սակայն, Ֆելիսիտէն տեսանելու համար, յանձնառու եմ ես ամենայն բանի»։

«Մի մոռանաք», յաւելացրեց Մարկիզը. «եթէ այս ժամի մէջ մի սիրախօսական բառ ևս դուրս թռչի ձեր բերանից, երբէք ներելու չեմ ձեզ»։

Լուդովիկոսը երդում կերաւ կրկին և դարձաւալ, թէ նա հաւատարիմ էր մնալու իւր խոստմանը։

Մարկիզը հնչեցրեց զանգակը։

Պատաւորը երևեցաւ։

«Թող գայ իմ աղջիկը», հրամայեց Հայրը։

Մի քանի րոպէից յետոյ ներս մտաւ Ֆելիսիտէն։ Մի հանգերձ սպիտակ ծանր մետաքսից խշխշուկեր նորա մարմնի վերայ։ Նորա մազերը զարդարած էին մի պարզ վինջով ծաղկափթիթի վարդերի։ Հանգերձի գոյնը կարող էր համարուիլ սրտի անմեղութեան նշանակը, ծաղկափթիթի վարդերը շուտով զարթեցած սիրոյ նշանակ։

Տեսանելով իւր սրտի սիրականը, կամէր աղջիկը մի ուրախ ողջունով վազել նորա վերայ։ Բայց Մարկիզը շուտով ներս մտաւ երկուքի մէջ տեղ և շշնջեց աղջկայ ականջին այսպիսի խօսք. «Սառն կացիր, իբրև մարմարիոն»։ Ապա բարձր ձայնով ասաց.

«Իմ զաւակ, Պարոն Քուրրիները շնորհ է ցուցել, որ հրաւիրանքով երևելու այս տեղ։ Մինչև այժմ յառաջ եմ տարել ես խօսակցութիւնը։ Գործերս կանչումեն ինձ. այս պատճառով պիտոյ քեզ բռնել իմ տեղս։ Բարեաւ մնաս, դստրիկդ իմ. մի ժամից յետոյ կը գամ ես»։

Նա համբուրեց աղջիկը և ապա խօսքը դարձուց դեպ ի երիտասարդը։

«Ներեցէք ձեր խոստումը, պարոն Քուրրիեր»։

Ժպտադին ողջունատուութեամբ ձեռնով, հեռացաւ նա։

Եթէ այդ խորամանկ մարդու ստոյգ դիտաւորութիւնը եղած լինէր անհնարին կացուցանել մի բացախօսութիւն իւր աղջկայ և նորա սրտի ընտրածի մէջ, ապա նա թողնելու չէր նորանց միասին։ Բայց նա կամեցել էր ուղղակի դորա ներհակը և ամենևին հաւատի էր, թէ իւր արդելմամբ սիրոյ բոցը նոյնքան ևս ուժգին կը բորբոքուէր։ Երկուսակը խոստովանութեամբ, թէ նորա սիրումէին միմեանց, այն սաստիկ պիտի բոցավառուէր կրակը, որ այնուհետև կարող չէր շիջանել։

Մարկիզի քայլերը գնալով գնալով անլսելի էին դառնում կօրիդօրումը։ Միրոզքը, այս առաջին անգամն էր, որ առանց վկայի կանգնած էին միմեանց դէմ-դէմ։ Ա՛յս բանս պատրաստեց նոցա դժուարութիւն և ամչկոտութիւն։ Ֆելիսիտէն քարշումէր իւր թևի զարդակապը, իսկ մանուկ Քուրբիերը երբեմն նայումէր դէպ ի սենեկի առաստաղը, երբեմն դէպ ի գետին։

Կարգն իմն է սկսանելու խօսակցութիւնը, կարծումէր նա։ Բայց չգիտեմ, թէ ինչպէս պիտոյ էր սկսանել, եթէ համարձակ չէ ինձ խօսել իմ սիրոյ մասին։

Ֆելիսիտէն իւր երկար մետաքսեայ թևերթևուկների տակից գողունի նայելով դէպ ի նա, կարծումէր իւր մէջ. «Երեկ պարահանդէսումը այնպէս լեզուանի էր պարոնը, ինչո՞ւ այժմ յանկարծ դարձել է նա անլեզու։

Մի մեղմ հառաչանք դուրս եկաւ նորա կուրծքից։

Եթէ նա բուսական հեռի կանգնած չլինէր պարոն Քուրբիերից, ապա լսած կը լինէր երիտասարդի անհանգստութեան և դժուարութեան հառաչանքը։

Ա՛յժմապէս համարձակուեցաւ երիտասարդը մի քայլափոխ աւելի մօտ գալ։

«Ո՛նչպէս, իմ պատուելի օրիորդ» ասաց նա կամաց։

«Իմ պարոն», պատասխանեց աղջիկը նոյնպէս։

Որովհետև աղջիկը անընդհատ լսեւոել էր աչքը դէպ ի գետին, զօրացաւ տղամարդի վստահութիւնը։

«Իտալիան մի գեղեցիկ աշխարհ է», ասաց երիտասարդը։

«Այդ բանը — այդ բանը ասացիք դուք ինձ երեկ», եղաւ աղջկայ ամօթխած պատասխանը։

«Ախայց, Ֆրանսիային կարող չէ հաւասարուիլ»։

«Ընդհ՛ր ոչ»։

«Որովհետև Իտալիան չէ այնպէս բազդաւոր ունելով ձեզ, որովհետև դուք —»

Երիտասարդի լեզուն կապուեցաւ, որովհետև մտաբերեց Մարկիզի հրամանը։

Դարձեալ մի հրեշտակ թռաւ սենեկի միջով. այնպէս մեղմ ու հանդարտ էր։

Ա՛յժմապէս նոր ի նորոյ խօսքը վեր կալաւ Լուդովիկոսը.

Ով նազելի աղջիկ Օրմենդի, մի բարկացէք, եթէ ես այդպէս լուռ ու մունջ, այդպէս ամօթխած եմ։ Բայց ձեր հայրը —»

«Իմ հայրս —»

«Ե՛կ, ա ցանկանումէր —»

«Ո՛նչ բանի»։

«Որ ես խօսէի ձեր հետ հաւատարակ նրա թերի վերայ միայն»։

«Ա՛ռ ինձ հրամայեց Նա» ասաց Փելիսիտէն համարձակ, «որ ես լինեմ ձեր հետ սառն, սառն — որպէս մարմարիոն»։

«Ա՛ռ նորա հրամանի պատուէրքը պիտոյ է —»

«Ա՛շղարշել լսուցանել»։

Սիրը շինում կայր և յիմար, ասում առակը։ Բայց երբեմն ազդում մարդուս մէջ և խելացի միտքեր։ Մի այդպիսի միտք այժմ անց կացաւ երիտասարդի գլխի միջով։ Շուտով դէմքը դարձուցանելով դէպ ի սիրած աղջիկը, ասաց նա.

«Սիրեմն, թէև ես այս րոպէիս չխոստովանեի, որ ջերմ և առ ի սրտէ սիրով սիրումէի ձեզ, այս պատճառով չունէիք դուք տեղիք երկրայելու այդ բանի վերայ»։

«Մի խորամիտ ժպտումն խաղաց մանուկ աղջկայ վարդակարմիր շրթունքի ջրոս կողմով։ Նա իսկոյն գուշակել էր երիտասարդի դիտաւորութիւնը և պատասխանեց».

«Թէև ես աչքերս դէպ ի ցած թողնէի, դորանից երբէք չունիք դուք տեղիք եղրակացնելու, թէ քաղցր չէր ինձ նայել ձեր վերայ»։

Այժմ Լուդովիկոսը աւելի մօտեցաւ աղջկան։

«Սիրեմն այսօր ոչինչ խօսք Սիրոյ վերայ — բայց էգուց —»

«Այգո՞ւց»։

«Իմ հայրս տեղեկացած կը լինի մեր սրտերի քաղցր գաղտնիքին։ Ցիրաւի ասելու է նա. այդպէս մանուկ, ինչպէս դու ես, իմ որդի, ոչ ոք ամուսնանում չէ։ Բայց ես կայծակի պէս արագ ոտերը կ'ընկնեմ»։

«Շա՛տ գեղեցիկ, անպատճառ այդպէս արեցէք»։

«Ես նորա առաջև ծունր կը խոնարհնեցնեմ, ինչպէս ահա ձեր առաջև»։

«Նա ծունր խոնարհրեցրեց աղջկայ առաջև և աչքը սիրուց և զմայլանքից վայելելով վերուղղեց դէպ ի նա։ Դոյն րոպէին բռնեց նա աղջկայ ձեռքը և խօսքը յատակ տարաւ ջերմն թեամբ».

«Ես հօրս ձեռը կը տանեմ դէպ ի շրթունքս, կը համբուրեմ նորան, ինչպէս այժմ համբուրումեմ ձեռը։ Ես կ'աղաչեմ այսպէս. Հայր իմ, մի աղջիկ, որպիսի Փելիսիտէ Օրմինդն է, երկրորդ անգամ ծնուելու չէ։ Ընդունդ վերահաստատ եղէք նորա պատուականութիւնը և տուէք նորան ինձ ամուսնակից։ Ինչքան շատով ամուսնանամ նորա հետ, այնքան երկար կը տեւէ իմ բաղդաւորութիւնս»։

Փելիսիտէն գլխով արեց.

«Այս անհակառակելի ճշմարիտ է»։

«Ի՛նչ ես կարծում, ինչ կը պատասխանէ իմ Հայրը»։

«Ձեր Հայրը սիրում Ձեզ», հարցրեց աղջիկը։

«Այնպէս քնքշութեամբ»։

Ֆեզլիսխանէն առաւ մի արժանապատիւ կերպարանք։ Գլուխը դէպ ի թիկունքը յետ թեքած, խօսից ծանրաբարոյ կերպով.

«*Ա՛յո՛ր կաց, իմ որդի, ես պատրաստ իմ ուշադրութիւն շնորհել քո ցանկութիւններին։ Եթէ հաւանելի կը լինի ինձ Ֆեզլիսխանէ Օրմենդը, որպ մասին երկբայութիւն չունիմ, ապա քո խնդիրը չպիտի անօգուտ եղած լինէր*»։

«*Պատուական, պատուական*», ձայն տուեց երիտասարդը. «*Ամէն ժամանակ վեր վեր կը թռչեմ ես*»։

«*Ա՛յո՛, այդպէս կ'առնէք գուք*»։

«*Ա՛յո՛ր ձեռներով գրկախառնելու նորան*»։

«*Այդ թոյլ տուած է*»

«*Իրիս ուրախութեան մէջ կը գրկախառնեմ նորան*»։

«*Որպէս երախտապէտ որդի*»։

«*Ամենևին այդպէս*»։

«*Ընդարձ, այդպէս ևս արժան ու իրաւ է*»։

Լուդովիկոս քուրերները այս խօսուածքի միջոցին իւր սիրածը գրկախառնել էր, մի մեղմ համբոյր փչելով նորա թշի վերայ։

«*Ֆեզլիսխան, իմ երջանկութիւն, իմ կեանք*»։

Նա կամէր գրկին գրկախառնել նորան. բայց գեղեցկուհին ժպտմամբ սպառնացաւ նորան մատով.

Կացիր, կացիր, իմ պարոն. մնաբարեւցէք ձեր խոստումը, ես իմ տուածը հաւատարմութեամբ լցուցել եմ մինչև այժմ։

«*Ճշմարիտ է*», ասաց Լուդովիկոսը. «*Ես պիտոյ հրամանից անց կենալ։ Ուրեմն նեղուցէք ինձ, պատուելի օրիորդ, որ հեռանամ ձեզանից։ Ես չեմ իմ ժամանակ կորուսանել։ Քաղցր խաղը այսօր իսկ պիտի դառնայ ստուգութիւն*»։

«*Իմ ամենալաւ բարեմաղթութիւնքը ուղեկից լինին Ձեզ*, ասաց Ֆեզլիսխանէն, *մատուցանելով ձեռը, որպէս հրաժարական ողջոյն*»։

Լուդովիկոսը համբուրեց պղծկայ ձեռը պատկառանքով։

Երկու կողմից խոր պլուխ տալով միմեանց, բաժանուեցան սիրողքը։ Երբէք մի աւելի գեղեցիկ և աւելի սիրարժան աղջիկ ու տղայ կապել չէին մի սիրոյ դաշն, որ աւելի երկար քան թէ կեանքը, որ գերեզմանի սահմանից դուրս պիտի տևէ. պատճառ, սիրոյ մշանջենաւորութիւնը միայն է սիրոյ ճշմարտութիւնը։

ՅՕԴՈՒՆԱՑ ՀԻՆԳԵՐՈՐԴ։

ՎՐԻԺԻ ԵՐԳՈՒՄԸ։

Նոյն օրին գինի ճաշուն, վաղաժամնակեայ, Լուդովիկոս տանն և երեքերորդի օրերում կառուցած ամրոցի անտառում երկու անձինք զբօս-

նումէին թանձրախիտ ծառերի միջով, որ թողումէին մի մի արևային ճառագայթների միայն ներս թափանցել ճանապարհների վերայ։

Դաքա էին ալևոր պարոն Քուրքիները, մի եօթանասնամեայ ծերունի, և նորա դուստր մարգարիտը, մի գեղեցիկ, գունաթափ աղջիկ տրտում թեան թուխ դգեստով։

Երկոքեանը մի քանի ժամանակ լուռ քայլումէին միմեանց կողքին։ Առաջինը որ վեր կալաւ խօսքը, էր ծերունին.

«Մի՞ թէ այսօր չկամիս դու ամենևին վեր նայել, սիրելի մարգարիտ», ասաց նա։ «Օրը այնպէս գեղեցիկ է, երկինքը այնպէս պայծառ և անամպ։ Մի՞ թէ և բնութիւնը իւր փառահեղութեան մէջ կարող չէր քո տրտմութիւնը գոնէ մի քանի ժամ փարատել»։

Մարգարիտը կամաց վերուղղեց աչքը։ Սա էր մի գեղեցկայարմար աչք, թուխ որպէս անաստղ գիշերը և այնու ամենայնիւ փայլատակող ինչպէս արեգակները երկնակամարի վերայ։ Նա ծանրութեամբ նայեց ծերունու վերայ և պատասխանեց.

Ինձ ամենապայծառ երկինքը պէտան երկար երևելու է սև քօղաւորուած, քանի որ հասել չէի նպատակիս որ անշարժ և անխռով դրած է հոգուս աչքի առաջև։ Երբ որ այս հղել էր, այնուհետև կը տեսանէք ինձ դարձեալ ժպտալով, հայր իմ։

Պարոն Քուրքիները շարժեց գլուխը։

«Ո՛ գիտէ, իմ զաւակ, արդեօք դու այնուհետև կարող էիր լցուցանել քո խոստումը։ Երևակայու թիւնը ամենայն բան պատկերացնումէ պլատպէս, քան թէ դա էր ստուգութեամբ. և լցուցած վըէժը տակաւին ոչինչ բարի պտուղ բերած չէ։ Այլև կարող էր մի բան հանդիպել քո ճանապարհի վերայ, որ դու կարծել չէիր»։

«Աահը միայն, ուրիշ ոչինչ, կարող էր կոտրել իմ կեանքը», պատասխանեց աղջիկը սաստկութեամբ. «պատճառ, իմ անբաղդ, սպանած հօր պատկերը օր ու գիշեր կանգնած է առաջիս և յիշեցնումէ ինձ, թէ պիտոյ էր լցուցանել իմ արած երդումը»։

«Մի՞ թէ դու գտել չես իմ մէջ մի երկրորդ հայր», հարցրեց ծերունին։

Մարգարիտը մտերմաբար նայեց նորան։

«Ախ՛, մի ասիր, բարեգութ հայր»։

«Իմ ամուսինս ու զաւակներս մեռան», խօսքը յառաջ տարաւ Քուրքիները։ «Ամենուս փոխարէնը չգտայ ես. բայց երանի՜ ինձ, որ ես բաղդաւոր եմ ունեցել զաւակներ»։

«Որ քեզ մեծարումն և սիրումն»։

«Հայտնի է ինձ այդ։ Լուսոլիկոսը է մի բարի, ուրախամիտ տղայ, դու իմ ծերութեան հրեշտակն ես։ Ես սիրումեմ ձեզ նոյնպիսի մտերմութեամբ, ինչպէս իմ վախճանած երեխայքը, այդ պատճառով ես նոցա անունները

տուել իմ ձեղ և Ադոլֆ ու Բէատրիսը փոխել եմ դէպ ի Լուդովիկոս և Մարգարիտ։ Ոչինչ բան պակասելու չէր իմ երջանկութեան համար, եթէ դու, ինչպէս քո եղբայրը, Նորանէից ընկերութիւն, փոխանակ փախչելու նորանից»։

«Հաւատացէք իմ տկարութեանը, հայր իմ», խնդրեց Մարգարիտը։ «Ցուսով եմ, որ շուտով կը գայ այն ժամը, երբ դուք այլ ևս տեսանելու չեք ինձ տրտմութեան զգեստով։ Այսօր կանուխ գնացել էի Բուլարդ առնուն, հռչակաւոր գուշակող կնոջ մօտ, որոյ մարգարէութեանը հաւատումէ բոլոր փարիզը»։

«Ես դո՞ւ հաւատումես նորան, իմ զաւակ»։

«Ո՛չ։ Ես նորան համարումեմ խաբեբայ կին, որ առատ վճարի փոխարէն յանձն առաւ սպասաւոր լինել իմ խորհրդին։ Նորա լրտեսները կը շրջապատեն այն տղամարդը, որին ընծայումեմ ես իմ ընտանիքի ձախորդութիւնը։ Արդէն յղացել եմ ես մի հաստատ դիտաւորութիւն»։

«Նորա աստիճանը, նորա պատիւը հասարակութեան մէջ պաշտպանումեն նորան երկրաւոր արդարադատութեան պատժից. պատճառ, դու չունիս ոչինչ ապացուցութիւնը —»

«Յաւիտենական արդարադատութիւնը իմ ձեռով կը հասանի նորան», պատասխանեց աղջիկը, աչքը վերադրելով դէպ ի երկինք։ «Նորա մատնողութեամբ իմ հայրս տանջուեցաւ։ Ո՜վ, և նա պիտի զգայ տառապանք որ աւելի գերազանց են տանջանարանի կտտանքից»։

Այս րոպէիս լսուեցաւ մօտակայքում քայլափոխների ձայն։

Մարգարիտը ականջ դրեց։ Այս քայլափոխները անծանօթ չէին նորան։

«Դա է պարոն Լաննոյը, հայր իմ», ասաց աղջիկը, այն երիտասարդ պատկերահանը, որին Դուք բաշխել էք Ձեր բարեկամութիւնը։

«Ո՜վ. նա ինձ ամենայն ժամանակ ընդունելի է»։

Մի կամարակապ գնացքից դուրս երևեցաւ Գուստաֆ Օրմննդը, որ ծանօթ էր Քուրքիների ընտանիքին որպէս մի չքաւոր պատկերահան Լաննոյ անունի տակ։

Ահ ինչ պատճառներ ունէր նա թաքուցանելու իւր ազգատոհմը և իւր ստոյգ անունը, կ'իմացուի մեր պատմութեան ընթացքից։

Պարոն Քուրքիները ընդունեց նորան մեծարանաւոր սեղմելով ձեռը։ Մարգարիտի երեսի վերայ ցոլանումէր մի շնորհակալութիւն որ շատ տարիներից պարտական էր այդ երիտասարդին, Գուստաֆ Օրմննդը մի ժամանակ իւր հօր թոյլտուութեամբ ուղևորութիւն էր արել Իտալիայի աշխարհները, ինչպէս կարծումէին, իւր անձը կատարելագործելու համար, բայց, ճշմարտութեամբ, նկարչութեան արուեստի մեծ հմտութեների գործերը ուսումնասիրելու համար, ըստ որում ծածուկ նուիրել էր իւր անձը պատկերահանութեան։ Նա Իտալիայում երևել էր Լաննոյ անունի տակ, որ կարողանայ

աւելի մեծարժէքաբար կենակցութիւն ունենալ իւր հասակակից նկարիչների հետ, որ չէին բարեացակամ դէպ ի աղնուականները յատկապէս։ Մանուշա քաղաքում, ուր ապրումէր պարոն Վերկուրը նոյնպէս մի այլ անունի տակ, այսինքն իբրև մի պարոն Քուրբիեր, Գուստաֆ Օրմծնդը բաղդատ էր գտանում մի ժողովրդական ուսանախմբութեան մէջ, ուր խումն բաղմութեան մէջ խրտնութեան ձիանքը այն կարգի առաջնե, որի մէջ նստած էր պարոն Քուրբիերը իւր զաւակներով, իւր քաջութեամբ փրկելու այս գերդաստանը ակնյայտնի կենսական վտանգից։ Փրկուածքը կամէին իւրեանց շնորհակալութիւնը յայտնել քաջասիրտ անծանօթին, բայց երիտասարդը խումն բաղմութեան մէջ անյայտացել էր. և երեք ամիս յառաջ գարձեալ հանդիպել էր Քուրբիերի ընտանիքին Վանսեննեան անտառի մէջ, ուր գտանվումէր նա, մի քանի կենդանագրական ծառաստանք նկարելու համար։ Մարգարիտը իսկոյն վերստին ճանաչել էր նորան, և սկսեալ այն օրից համարվումէր նա Քուրբիերի ամրոցի մէջ իբրև բարեկամ։

Ընդ խոսակցութեան մէջ, որ այժմ լինումէր, Գուստաֆը մօտ կանչեց իւր Լաւրենտիոս սպասաւորը որ հետևից հետևել էր նորան։

Այս յանձնեց նորան նկարչութեան թղթերի պահարանը որի մասին յիշեցինք առաջին յօդուածում։

«Ներեցէք ինձ, եթէ այսօր միայն լցուցանումեմ իմ խոստումը և մատուցանումեմ Ձեզ այս ստուերագրութիւնքը», ասաց նա։

Պարոն Քուրբիերը բացեց պահարանը։

«Ա՛յ. սոքա շատ պատուական պատկերներ են։ Ի՛նչ կենդանութիւն թագաւորում այս ժողովրդական բաղմութիւնների մէջ։ Տե՛ս միանգամ, Մարգարիտ»։

Աղջիկը աչք ներս ձգեց այն տեղ և հաւանութեամբ շարժեց գլուխը։

Ծերունին թերթելով յառաջ գնաց և ապա հոգեվայելուած ձայն արձակեց.

«Ա՛ա. այս է վաճառանոցի հրապարակը Մանուշայում։ Ահա կատաղի ձիանքը։ Ահա սայլի մէջ նստածքը ևս և իմ զաւակները։ Ահա մի երիտասարդ ձեռք է ձգում ձիերի սանձերը։ Վերպարանքները փոքրիկ են այո՛, բայց երեսքը զարմանալի նման։ Ո՞վ. այս պատկերը պիտի բաշխէք ինձ, պարոն Լաննոյ։ Թոյլ դա միշտ յիշեցնէ ինձ ձեր քաջագործութիւնը, որ, ցաւելի է ասել, այն միջոցին չկարողացայ ես վարձատրել»։

«Մի բարեգութ աստուածութիւն», պատասխանեց Լաննոյը, «չետ է պահել վարձատրութիւնը ապագայ օրերի համար։ Թէպէտ դուք պատկանումէք Ֆրանսիայի բարձր աղնուականներին, այնու ամենայնիւ արժանատրումէք ինձ ձեր կենակցութեանը։ Դարանով ղգումեմ իմ անձը պատուած ու փառաւորուած»։

«Ո՛նչ է տոհմական ազնուականութիւնը համեմատելով այն ազնուականութեանը որ ճարտարութիւնը պարգեւում է իւր սիրածներին», խօսեց Մարգարիտը, առանց դարձուցանելու աչքը պատկերահանի ստեղծագործութիւններից։

Պարոն Քուրքիերը փորր ինչ վաստակել էր ղբօսանքից. նա որոշից վերադառնալ դէպ ի ամրոցը։

«Ձեր նկարած բաները տանում եմ հետս դէպ ի իմ սենեակը», ասաց նա։ «Ա՛յն տեղ կամիմ ես ամենայն հանդարտութեամբ վայելել գոցա տեսութիւնը։ Մարգարիտ, ես թողում եմ քեզ մեր բարեկամին ընկերակից։ Դու մինչև այժմ տխրամիտ էիր. քանի որ պարոն Լաննոյը այս տեղ է, քո ճակատից փարատուել են սեւամած ամպերը։ Լրացուցէք ձեր գործը, երիտասարդ բարեկամ, և աշխատեցէք արեը լուսին դուրս փայլեցնել։ Ցուսով եմ, որ դուք մինչև երեկոյ կը բաշխէք մեզ ձեր ընկերակցութիւնը»։

Օ՛ներսնի պարոնը շարժեց կարծեցած պատկերահանի ձեռը և ապա չքացաւ բարձր կնձնի ծառերի ճեմելիքում, որ տանում էին դէպ ի մօտակայ ամրոցը։

Մարգարիտը և պատանի Օրմոնդը մի քանի ժամանակ լուռ թեամբ յառաջ տարան իւրեանց ղբօսանքը, մինչև հասան նորա անտառի մէջ մի ազատ տեղի, ուր գտանէին մոքրիկ մատուռն։ Երբ որ Մարգարիտի հայեացքը հանդիպեցաւ այդ շինուածին, մի խորին հառաչանք արձակուեցաւ նորա կուրծքից։ Նա կցեց ձեռքը և իւր թուխ աչքերով որոնում էր երկինքը։

Վոլտոտիը ընդունում նորան մի հայեացքով որ լացայայտում էր մի աւելի վերին ախտ, քան թէ բարեկամութեան ախտը։ Աղջկայ խորհրդաւոր ցաւը յառաջացնում արձագանք նորա հոգու մէջ։ Նորա սիրտը յափրշտակից նորան դէպ ի հոգեզմայլութիւն. նա մոռացել էր, որ համեմատութեամբ քուրքիեր օրիորդի հետ համարվում էր ինքը մի շքաւոր աշակերտ նկարչութեան արուեստի։ Աղջկայ ձեռը բռնելով, ասաց նա.

«Պարոն Քուրքիերը ճշմարիտ էր ասում։ Ես այսօր ձեր սիրտը լցուած է տրտում թեամբ։ Ո՜հ. ինչո՛ւ չգիտեմ ես, թէ ընդհէր այդ երեսը, որ ուրախութեան վարդերը այնպէս փառաւոր զարդարելու էին, միշտ շառագոյն է մարմարիոնի նման և այդ աչքիս դէմքի գծագրերը երբէք պայծառակերպում չեն մի ժպտմամբ։ Ով Մարգարիտ. ես կը տամ իմ բոլոր կեանքս, իմ սրտի արիւնի վերջին կաթիլը, եթէ կարողանայի զորանով պատրաստել քեզ գոնէ մի հատ ուրախ ժամ»։

Մարգարիտը հեռեց նորանից իւր ձեռը։ Ախտերը որ երիտասարդը այս առաջին անգամն բացայայտումէր, վաղուց արդէն կարդացել էր աղջկը նորա երեսի վերայ. ուրեմն նա պատրաստուած էր արդէն դէպ ի այդ բանը։ Աղջկը չկարմրեցաւ, նա դէպ ի ցած չդողաց աչքը. խաղաղ ու հաստատ հանդիպեցաւ նորա աչքը երիտասարդի աչքին։ Բայց նորա բերանը խօսեց։

«Եթէ ուղիղ հասկանում էի ձեր խօսքը, ապա է դա մի խոստովանութիւն սիրոյ, պարոն Լաննոյ —»

Երիտասարդը ձգեց իւր անձը նորա ոտները և լուռ թեամբ սեղմեց նորա ձեռը իւր սաստիկ ալեկոծուած կուրծքին և իւր շրթունքին։

«Ա՛յո կացէք, իմ բարեկամ» ասաց աղջիկը քաղցրու թեամբ։ Ես բարկացած չեմ ձեր սիրոյ խոստովանութեան վերայ։ Պատճառ, վաղուց յայտնի էին ինձ ձեր զգացողութիւնքը իմ մասին։ Մի աղջկայ աչքեր շատ սրատես են։

«Ու կարո՞ղ էր չքաւոր պատկերահանը յուսալ» ասաց Գուստաֆը աղաչապին, «Թէ Մարգարիտ Քուրլիերը, մեծատոհմիկ ժառանգուհին, սրտակից է իւրեան»։

«Այս ժամուն տակաւին ոչինչ—գալոց օրերում գուցէ ամենայն ինչ»։

«Ի՛նչպէս պէտք էր ինձ մեկնել այդ խօսքը»։

«Ես չեմ համարձակվում խարեբայութեամբ յուսադրել քեզ։ Դնարձեալ ասեմ, վեր կացէք»։

Գուստաֆը վեր կացաւ։ Ցնոր հայեացքով խօսեց նա.

«Ինչու՞ համար իմ բազդի ծագող աստղը ծածկումէք ամպի տակ»։

Մարգարիտը նայեցաւ նորան խնդրողապէս։

Ի պատիւ մեր բարեկամութեան, աղաչումեմ, մի ստիպէք ինձ աւելի։ Մի ասուր, որ այնքան սակաւ պարտնակում է իւր մէջ քնքշութիւն, ինչպէս նոյն իսկ ատելութիւնն է, տակաւին տիրապետում է սրտիս։ Ես կարող չեմ մնացել մի ամուն մնական գաշնաւորութեան վերայ, մինչև լցուած չէր իմ սրտի խաւար փափագը։

«Այդ ինչ գաղտնիք է։ Ասացէք ինձ։ Երդվումեմ ձեզ պահել այդ գաղտնիքը»։

«Ես կարօտ չեմ այդ երդմանը այնպիսի տղամարդի կողմից, որպիսի դուք էք։ Բայց ես կարող էի ձեզանից պահանջել մի այլ երդում։ Գուցէ մօտենում է արդէն ժամը»։

«Իմ սէրս պատրաստ է յանձն առնուլ ամենայն գործ», ձայն արձակեց Գուստաֆը։ «Եթէ վշտացած էք—վրէժխնդիր կը լինիմ ես։ Ունիք դուք մի թշնամի—ես կը սպանեմ նորան»։

Մարգարիտը շուռտուլ և սաստկութեամբ ըմբռնեց նորա ձեռը։

«Այո՛, ես ունիմ մի թշնամի, ով Լաննոյ։ Ես կամիմ հաւատալ ձեզ իմ սրտի խոցը։ Բայց ոչ այժմ—ոչ այս տեղ—այն տեղ, ուր շուտով միասնագամ կը տեսանենք միմեանց»։

Աղջիկը աչ ձեռով մատնացոյց արեց մատուռը։

«Ո՞վ, ինչպէս վստահանամ այդ գաղտնիքը ընդունել իմ սրտի մէջ» ձայն արձակեց Գուստաֆը։

«Ա՛յդ գաղտնիքը ահաւոր է, իմ բարեկամ, և կը դղրդէ ձեր աղնիւ սիրտը։ Ընդունեցէք յառաջուց իմ շնորհակալութիւնը այս խօսքերովս. «Ո՛չ մի տղամարդ երկրիս վերայ չէ ինձ այնպէս սիրելի, որպէս դուք, իմ եղբայր։ Երբ դուք մի ժամանակ, Մանուսայում դարձաք իմ կեանքի փրկիչը, դա արդէն կիսով չափ ձեր սեփականութիւնն էր։ Ես ըոլորովին կը պատկանիմ ձեզ, երբ—»

«Նա կարճեց խօսքը, որպէս թէ վախուեր մի գուցէ չափից դուրս բան ասած լինէր»։

«Ո՛հ, լրացուցէք ձեր խօսքը», խնդրեց Գուստաֆը։

«Երբ միւսանգամ կը տեսանենք միմեանց—այն տեղ»։

Դարձեալ մտնաջոյց առնելով մատուռը, շտապ քայլերով հեռացաւ աղջիկը։

Պատանի Օրմնդը նայուեր նորա քամակից իրրև ուշաբարձուած։ Անյուսհետև իւր Լաւրենտիոս ծառայի հետ վերադարձաւ դէպ ի Փարիզ։

Ինչպէս առաւել մեծ մասը երիտասարդների և աղջիկների որոց սիրտը հակամիտուած է դէպ ի գաղափարականը (բարձր ու վերինը), նոյնպէս և Գուստաֆ Օրմնդը կամեր սիրելի լինել ոչ թէ իւր ազգատոհմի և հարըստութեան պատճառով, այլ միայն իւր ինքեան պատճառով։ Նորա սիրոյ գաղտնիքը ուներ իւր համար մի անասելի գրաւիչ զօրութիւն, Դա չպիտի յայտնուեր իւր հօրը, մինչև Մարգարիտ Քուրբիները, այն բարձր աղնուական օրիորդը չհրատարակեր նորան իւր փոխադարձ սիրոյ քաղցր գաղտնիքը, մինչև պատրաստ չլիներ նա տալ իւր հարսնութիւնը էքաւոր պատկերահան Լաննոյին, ինչ անուն կրումեր ինքը։ Անյուսհետև կամեր նա ասել իւր ճշմարիտ ազգատոհմը և անունը և նորան իրրև իւր նշանած տանել հօրը մօտ։

Դայց, ինչպէս գիտենք մէք, Մարկիզը ուներ ուրիշ դիտաւորութիւններ իւր որդու մասին։

Վաղուց օրի առաւօտուն, յետ Գուստաֆի հանդիպմանը Պարոն Քուրբիներին և նորա աղջկան, Մարկիզը ընդունեց Կոմս Բոհանի այցելութիւնը։

Երկոքին ծնողքը հաստատեցին այն պայմանքը, որով ամուսնութիւնը Հորտենզիա Բոհանի և Գուստաֆ Օրմնդի մէջ պիտի կապուէր։ Կոմսը գովասանուեր իւր աղջիկը իրրև օրինակ բարեպաստիարակութեան և նրբաբարոյութեան։ Մարկիզը մեծակարող պալատականին տեղիք տուեց ամենայն բանի մէջ և ասաց նորան, թէ հաւաստի էր ինքը որ իւր որդին իւր անձը արժանաւոր կը կացուցանէ այդ պատուին, կոմսուհու փեսան լինելու։

Կոմսը, որոյ երեսը կրումեր ծայրագոյն աղնուական մեծամտութեան հնիքը, պատասխանեց քաղցրութեամբ.

—Իմ Ձեր որդին, պարոն Մարկիզ, մի ամենևին պատուական տղամարդ է։ Նորա մի բանին անհաճան եմ ես. դա է, եթէ կարող էի այսպէս խօսել, նորա մեծամտութիւն երանգներով։ Ու Մարկիզն որդի միայն ձեռ ին պաս-

տառի առաջև կանգնած — չէ ախորժելի տեսարան։ Այլև «յաւելացրեց նա ժպտալով», մեր Հորեղբայրն սիրող չէ մրոյների։ Հա, հա, հա. այսպէս չէ, այդ գիւտը վատ չէ։

Մարկիզը խոնարհրեց գլուխը հեգնաբար։

«Շատ սրամիտ և հանճարեղ», ասաց. «Եւ ես սիրող չեմ ջնջոցների. բայց յաճախ սովորութիւն ունիմ գործ դնելու այդպիսիքը —»

«Որ և իցէ նպատակի հասանելու համար»։

«Այդպէս է»։

«Ոտանէ, պարոն Մարկիզ, Ձեր սուր հանճարը իմիս կրունկը կոխուած։ Ուրեմն այս երեկոյիս տակաւին սպասում եմ Ձեր պատուելի այցելութեանը»։

«Խնդրում եմ, իմ խոնարհական ողջոյնս մատուցանել տանտիկնին կոմսուհուն և Ձեր պատուելի աղջկան»։

Լսեր գլուխ տալով միմեանց, բաժանուեցան երկոքին հպարտները, որ իւրեանց զաւակների գալոց օրերը վճռահաստատէին, առանց խորհրդակից լինելու նոցա սրտերի հետ։

Ներր որ դուռը փակուել էր կոմս Բոհանի յետքից, մնայլուեցաւ Մարկիզի երեսը, և նա քթի տակին մմնմնալէր այսպէս.

«Մի այդպիսի տղամարդ կշիռ ու պատիւ ունի պալատում, նորա ջատագովութենից կախ է իմ որդուս ապագայ բաղդաւորութիւնը։ Ես կարծում եմ, բաղդը այն խորհրդով յիմար գլուխները տեղաւորում թագաւորների մօտակայքում, որ նորա լինին վեր բարձրանալու սանդուղք խոհեմների համար։

Նա քաշելով զանգակը, կանչեց իւր մօտ մի սպասաւոր։

«Տաճն է իմ որդիս», հարցրեց նա։

«Պարոն Օրմնդը գտանվում է իւր սենեկում»։

«Վնաս, ասա, որ — իսկոյն գայ»։

Սպասաւորը հեռացաւ։

«Նրթէ իմ պատուասիրութենից մի կայծ միայն հոգի որում է նորան», ասաց Մարկիզը, «ապա կը յօժարի նա, այնուհետև բոլորը կը կատարուի ըստ իմ ցանկութեան։ Աստծ է. ինչ որ կը սերմանես, նորին կը հընձես։ Այդ առակը ստոյգ է. պատճառ, իմ սերմանածս չէ բերելու արիւնոտ, այլ ոսկի պտուղներ»։

Պարզ առանին հագուստով, որոյ վերայ տեսանելի էին փոքրիկ բիծեր երանգների, գուստափը ներս մտաւ։

«Պատրաստ եմ լսելու ձեր հրամանները, իմ Տէր»։

Մարկիզը մի տհաճ հայեացք ձգեց գուստափի հագուստի վերայ և խօսեց զայրացած ոճով.

«Ո՞նպէս. մի՞թէ այդպիսի հագուստով երեւումս քո հօր առաջև»։

«Ես ընդէր ոչ», պատասխանեց Գուստաֆը սառնութեամբ։

«Երդնուք վայել է այդ մի Մարկիզի որդու», հարցրեց հայրը խոժոռ հայեացքով։

«Գուցէ ոչ — բայց անպատշաճ չէ ճարտարապետին, ես դեպու միշ զբաղուած էի մի պատկերով»։

Մարկիզի շրթունքը դողդոջեին արհամարհաբար։

«Մի գեղեցիկ զբաղումն։ Դա քեզ և ծիծաղելի կը կացուցանէ մեծամեծների աչքում»։

«Ինձ փոյթ չէ», ասաց Գուստաֆը հանդարտութեամբ, «հիմնարնների ծաղրածութիւնը կամ անմիտների գատողութիւնը»։

Մարկիզը կնճռած յօնքերով մռնչեցաւ նորան։

«Ես նմեք ես, քո հայրդ, նոյնպէս անհաւան եմ քո արարքին»։

«Դժուար թէ այդպէս լինելու էր մի մարդ որպ նոյն իսկ ապարանքը ղարդարած է ամենագեղեցիկ ճարտարապետներով»։

«Երծաքով գնած ճարտարապետներով», պատասխանեց Մարկիզը, սաստիկ շեշտելով այդ խօսքերը։ «Իմ որդու ձեռքով ստեղծած գործեր չեմ ցանկանում ես ունենալ»։

Գուստաֆը մի քանի րոպէ լռութեամբ նայում էր իր առաջն։ Հայրը յառաջ տարաւ խօսքը։

«Գու լուռ ես, դու զգում ես, որ ես պատճառ ունիմ բարկանալու քո վերայ»։

Երիտասարդը վերստին բարձրացրեց աչքը։ Գլուխ տալով, պատասխանեց նա.

«Իմ պատկառանքս Ձեզանից, հայր իմ, փակում է բերանս, պատասխանելու ձեր հարցմանը»։

«Ես թոյլ եմ տալիս, այդ պատկառանքը յետ դնել», ասաց հայրը։ «Ես կամենում եմ պատասխան»։

Երիտասարդը հպարտութեամբ վեր ուղղեց իր անձը։

«Ապա ուրեմն, հայր իմ, արձակ համարձակ խոստովանում եմ Ձեզ, որ ես խօսակցութիւնը մարդկային իմացականութեան, ճարտարութեան և գիտութեան ամենավերին ստեղծուածների վերայ աւելի վեր եմ դասում քան թէ մի դատարկ շատախօսութիւն ներկայիս նոր ձևերի վերայ։ Ինձ պատրաստում աւելի քաղցր հաճութիւն, հիացմամբ զննել Բափայելի և Տիցիանի աստուածեղէն կանացի կերպարանաստեղծութիւնքը, քան թէ մեր հազար անգամ նկարած կանանցը հաճոյանալ։ Ես աւելի պատուաւոր եմ համարում կրել նկարչի մշիկ ու երանգատախտակ, քան թէ հետեւելով մեր մանուկ աշնուականների օրինակին, զեղխ կատաղի զբօսանքների մէջ կորուսանել իւր գոյքի կէսը թղթախաղութեամբ, կամ թէ Աստուծոյ նմանութեան պատկերը անարգելով անասնարար, միմեանց արբեցնել և թափ-

ուիլ գետնի վերայ։ Ես անու անու մեմ աւելի արժանաւոր, քան երևակայութիւնը մարմնացնել պատառի վերայ, քան թէ որսի մէջ վայրենաբար վազելով իրրև արիւնարբու որսական շուն, մի խղճալի անասուն հալածել դէպ ի մահ։ Այո՛ այո՛, պատուական ընդաղմունք, որոց ասումն ազնուականներին պատկանաւոր ընդաղմունք»։

Վոլտաիրի երեսը այս խօսքերի վերայ կարմրել էր և նորա աչքը փայլատակումէր։

«Վոլ դառնանումես, իմ որդի», ասաց Մարկիզը։

«Այս խօսումեմ միայն ճշմարիտ, հայր իմ։ Ես զգումեմ ինքս ինձանից, երբ որ մտածումեմ, որ և ես մի ժամանակ, երբ տակաւին գրեթէ տղայ էի, մասնակից եմ գտանուել այդպիսի անարժան գնացքի։ Ո՜վ, Թո՛ղ գովաբանուի Ճարտարութեան աստուածեղէն հոգին, որ ինձ ապականութեան տղմից դուրս խլեց և ինձ կեանքի արժանաւորութեան և գեղեցկութեան հետ ծանօթացրեց»։

Մարկիզը կծեց շրթունքը և մի քանի անգամ մեծ քայլերով անց ու դարձ արեց։ Ապա յանկարծ մեաց կանգնած իր որդու առաջև, կցեց բազուկները և զննելով նայեց նորա վերայ։

«Այս քո մեղսութիւններին դէմ կը դնեի իմ հայրական կամքս», ասաց նա, «եթէ յոյս չունենայի, որ քո հրաշալի ցնորները կը փարատուէին քո մտաւոր ամուսնութեամբ»։

Վոլտաիրը մի քայլափոխ յետ քաշուեցաւ։ Նորա երեսի վերայ նկարվումէր զարմացը։

Իմ ամուսնութի՞ւնս, իմ ամուսնութի՞ւնս։

«Վոլ զարմանումես այդ բանի վերայ, իմ որդի։ Քո զարմացքը կը փոխուի ուրախութիւն, եթէ ասեմ քո ապագայ հարսի անունը։ Նա է մի ճարտարապետական գործ բնութեան — գիտեմ, դու սիրումես այդ մեծ ճարտարապետի հոյակապ գործերը — Հորտենզիա, աղջիկը Ռոհանի։ Այսպէս չէ՞. մի այսպիսի հարսն համարձակուելը չէիր երազի մէջ և տանել քեզ»։

«Ներաւ, այդպէս բարձր ճախրել չէ իմ ցանկութիւնների թռիչքը», պատասխանեց Վոլտաիրը նորբը արհամարհութեամբ։

Նորա հայրը հասկացաւ նորան, բայց անտես արևց։ Խօսքը յառաջ տարաւ.

«Աշխատութիւն է արժել ինձ համոզել կոմսը — և դուքս Շամբրին իննդումեր գեղեցիկ, հպարտ Հորտենզիայի հարսնութիւնը — բայց մի՛ յուզիր, Վոլ հանդիստացանք։ Այժմ դժուար կը լիներ քեզ բաւեր գտանել, քո շնորհակալութիւնը բացայայտելու»։

Ներիտասարդը վաղուց արդէն որոշել էր իւր վիտաւորութիւնը։

«Ընդու ամենայնիւ, հայր իմ», ասաց որդին», շնորհակալ եմ Ձեզ ըստ աշխատութեան համար, որ յանձն էք առել պատրաստելու ինձ վայ-

լուն ապագայ օրեր. բայց Ձեր առաջարկութիւնը վճռաբար մերժումեմ ես։ Կոմնուհին երբէք լինելու չէ իմ ամուսին»։

Կեղծաւորուած խաղալութիւնը յանկարծ փախաւ Մարկիզի երեսից։

«Ո՛նպէս. դու համարձակվո՞ւմես», աղաղակեց նա բարկութեամբ. «Դու հակառակո՞ւմես իմ կամքիս»։

«Իմ սիրտը չէ զգում ոչինչ սէր դէպ ի այդ կինը», պատասխանեց Գուստաֆը հաստատութեամբ։

Խորջորջուած բարկութեան մէջ երևեցաւ Մարկիզի իսկական բնաւորութիւնը։ Նա դուրս թռղեց մի բարձրաձայն արհամարհական ծիծաղ։

«Վո սիրտը. յիմարաբանութի՛ւն։ Այս տեղ խնդիրը միլիոնների, և մի պալատական պաշտօնի վերայ է»։

«Ես իմ ճարտարապետական շնորհը աւելի վեր եմ դասում», ասաց շուտով Գուստաֆը։

Վո չհամեղութիւնը մի յիմարական գործ է։ Դու կը ստորագրես ամուսնութեան պայմանագիրը։

Հայրը խօսեց այս բառերը սպառնալից հայեացքով և հրամայողական ձայնով։

Գուստաֆը յաղթեց իր սրտի բորբոքմանը և ասաց.

«Դուք պահանջումէք ինձանից մի անկարելի բան»։

«Ընկարելի՞ բան. ինչ պատճառով»։

«Որովհետև ես արդէն մի այլ կնոջ ուխտել եմ սէր և հաւատարմութիւն»։

«Ո՛նչ եմ լսում ես»։

«Իմ խօսքս անուրանալի պրաւ է դրած»։

Մարկիզի բարկութիւնը մօտ էր հասանելու իր ծայրագոյն սահմանին, և նա, հաւանական է, որ պիտի արձակած լինէր սպառնալիքը, եթէ պրօ Հանդարտ, Հպարտ կերպարանքը չազդէր նորա վերայ ակնածութիւն։ Բայց այսպէս սանձահարելով իր անձը այն զօրութեամբ որ շատ տարիներից ընտելացել նորա մէջ, ասաց նա չափաւորութեամբ.

«Ես ո՛չ է այն կինը, որ դու կոմս Րոհանի դուստրից նախապատիւ ես համարում»։

«Մի՛ հարցաքննիր այդ բանը, հայր իմ», պատասխանեց Գուստաֆը։

«Ես այժմ կարող չեմ տակաւին ասել Ձեզ նորա անունը, բայց հաւատացած կացէք, որ իմ ընտրածը Հպարտ Հորտենզիայից հաւասարապատիւ է»։

«Ես երբ կ'իմանամ նորա անունը»։

«Կուցէ շուտով— գուցէ երբէք ոչ»։

«Խաւական է քո յիմարութիւնը։ Բայց ես կարող չեմ Րոհանի աղգատոհմի առաջև քո ծիծաղելի անյօժարութեամբ խայտառակել իմ անձը։

ես տալիս եմ քեզ երեք օր ժամանակ մտածելու։ Եթէ դու չփոխես քո դիտաւորութիւնը, այնուհետև քո հայրը կը փոխուի քո տէրը և կը ստիպէ քեզ հնազանդուիլ»։

«Ոչինչ սպառնալիք», ձայն արձակեց Գուստաֆը, իւր ձեռը վեր ձգտելով դէպ ի սեղանի առաստաղը, *«և ոչ իսկ իմ գոյքի կորուստը կարող էր ինձ երդմնազանց կացուցանել»։*

Հետ պահած կատաղութիւնը մօտ էր պատռելու Մարկիզի կուրծքը։ Նա յարձակուեցաւ որդու վերայ, բռնեց նորա ուսերից և աղաղակեց.

«Դուռ, ապերաշխատ. եթէ իմանայիր, թէ ինչ զոհեր բերել եմ ես, քեզ ու Ֆելիսիտէին մի փառաւոր կեանքի վիճակ պատրաստելու, դու չէիր այդպէս ճակատագ դէմ դնելու ինձ, այլ իմ ոտերիս մօտ կը հալուէիր ղղջալով, ըստ որում դու մի այդպիսի բարեգութ հայր —»

Գուստաֆը մեղմութեամբ արձակեց իւր անձը նորա ձեռքից։ Այ ձեռը դնելով կուրծքի վերայ, ասաց նա սիրտը շարժուած ձայնով.

Իմ բարեգութ հայրս միշտ պատուել եմ և կը պատուեմ մինչև վերջին շունչը իմ կեանքի։ Բայց որդիական պարտականութենից վեր մնում տուած իսկի հաւատարմութիւնը. դա է ամենապատուական զարդը պարկան պարծանքի թագի մէջ։ Ոչ մի աղնուատոհմ և ոչ մի ազնիւ տղամարդ թեթևամտարար ապականելու չէր նորա փայլողութիւնը։ Յաղթահարեցէք ձեր բարկութիւնը, իմ հայր, և սպասեցէք այն րոպէին, երբ իմ ընտրած հարսը կը բերեմ ձեր գիրկը, այնուհետև իմ Բ-ութ-ն հայրը ձայն կ'արձակէ. «Իմ որդի, դու ընթացել ես արդարացի, դու վարուել ես իրրև մի ճշմարիտ ազնուական»։

Ընդունց խօսելու պըղև տալով, հեռացաւ Գուստաֆը։ Որդու վերջին խօսքերը, դաշնակի հարուածք եղան հօր սրտի համար։ Գունաթափ երեսով և դողդոջ շրթունքով ձգձգուեցաւ դէպ ի մի նստարան, հանգստացաւ նորա վերայ և կծկած ձեռը սեղմեց ճակատին։

«Ով իմ Աստուած», քթի տակին խօսում էր նա. *«իմ յաւուրկ որդիս իւր խօսքերի մէջ տալիս է ինձ խոհելու մի թոյն, որ իրրև կրակ այրվում երակներիս մէջ։ Հաւատարմութիւնը է ամենապատուական զարդը պարկան պարծանքի թագի մէջ։ Եւ իմ հաւատարմութիւնն — իմ հաւատարմութիւնս։*

Նա յանկարծ վեր թռաւ և երկու ձեռքը տարածեց իւր առաջև.

«Կորիր, հեռացիր դու, զարհուրելցուցիչ ցնորք իմ անցած գնացած օրերի։ Ես չկամիմ դէպ ի յետ նայել։ Դէպ ի յառաջ, դէպ ի յառաջ թող ուղղեմ աչքս — դէպ ի թագաւորական աթոռի աստիճանքը։ Այն փայլողութիւնը, որ պիտի շրջապատէ իմ գլուխներս, կարող չէ մնտենալ պղտիանը։

Սենեակը մեծ քայլերով չափելով, յառաջ տարաւ խօսքը բարձրաձայն.

«Ինձ պէտք է խորամուխ լինել անհնազանդ որդուս գաղտնիքի մէջ։ Երբ ես ամենայն բան գիտէի, այնուհետև կարող էի արդէն հնարք գտանել շուտով կործանելու այս սէրը, որ արգելապատնէշ է իմ դիտաւորութիւններին։ Ով որ արել է այն, ինչ որ ես եմ արել, այլ ևս ոչինչ բանից չետ քաշուելու չէ դողալով։

Դուռը որ բացվում էր դէպ ի իւր աղջկայ սենեակները, այս միջոցիս աննկատելի կերպով բացուել էր մեղմութեամբ։

Մի թեթև ձեռն կամաց դրուել էր նորա ուսերի վերայ։

Ընդունեց թուեցաւ նորան, որպէս թէ մի ոգեղէն ձեռն շօշափում էր նորան։ Մի անյօդ աղաղակ գործելով, շրջեց երեսը։

Վասիլի Գեղիսիտէն, նորա դուստրը, կանգնած էր նորա առաջև, բոլոր մարմինը դողալով։ Հօր ահ ու դողը երկիւղ էր բերել և նայն իսկ աղջկայ վերայ։

Մարկիզի դողուն շրթունքից դուրս եկան այսպիսի խօսքեր.

«Դո՛ւ — դո՛ւ — ես, իմ Գեղիսիտէ»։

«Այո, սիրելի հայր իմ»։

«Ընդհատիդ դու. լսի՛ր ես դու —»

«Ո՞նչ»։

«Ինչ որ ես այն իսկ րոպէիս խօսում էի»։

«Ոչինչ բան լսել չեմ։ Բայց դուք այդպէս լորդորուած էք. — Ով իմ Աստուած. հիւանդ էք։ Պիտոյ էր ինձ ձայն տալ, որ օգնութիւն հասուցանեն»։

Աղջիկը կամեր շուռակել դէպ ի զանգակի լարը։ Բայց Մարկիզը չետ պահեց նորան։

Իւր խոովութիւնը դժուարութեամբ ամենայնիւ կարելով, ասաց Նա.

«Դու սխալում ես, իմ զաւակ։ Ես հիւանդ չեմ, այլ փորը ինչ խռոված։ Կամիմ ասել քեզ և պատճառը։ Ահա մի փորձ չատաչ քո եղբայրը գնաց ինձանից։ Ես արեցի նորան մի առաջարկութիւն որով պիտի բաղդաւորուէր նա։ Այդ ապերախտը չէ ճանաչում իւր հօր բարեգութեան հոգաբարձութիւնը»։

«Մի՞թէ», հարցրեց Գեղիսիտէն զարմացած։

Մարկիզը շուտով մօտ քարշեց նորան և աղաչական հայեացքով նայում նորա վերայ։

Բայց դու, իմ զաւակ — ես հաւատի եմ, որ դու անհնազանդութեամբ չես ծանրացնելու իմ սիրտը»։

Աղջկայ մեծ հոգուից ձայնը խօսեց.

«Կարդացէք իմ հայեացքի մէջ ձեր խօսքի պատասխանը»։

«Այո՛, այո՛, Դու ճշմարտապէս սիրում ես քո հայրը», ձայն արձակեց Մարկիզը։ «Այդ հեղափոխ ստորներից նայում էի վերայ քո պայծառակերպուած մեր հոգին»։

«Ի՛նչպէս կարող էի չսիրել Ձեզ», պատասխանեց Ֆելիսիտէն ամենամտերիմ քնքշութեան ցուցակութեամբ։

«Մի հայր իւր զաւակի համար, որ կորուսել էր իւր մայրը, ամենասքելի բարին է երկրիս վերայ։ Ի՛նչպէս երջանիկ եմ, որ ունիմ ես այդ բարին»։

Նա երկու ձեռքով փաթաթուեցաւ հօր վզին և համբուրեց նորան։

Հայրը նոյնպէս գրկախառնեց նորան։

«Ի՛մ սիրելի Ֆելիսիտէ։ Ա՛յո դու իմ սիրականս ես և կը լինիս միշտ»։

«Երբ որ ես մտածումեմ», խօսքը յառաջ տարաւ Ֆելիսիտէն, «թէ կան երեխայք, որ երկնային տեսչութիւնը զրկել է հօրից ու մօրից, որ գուցէ թէ իրրև որբեր, բարձի թոզի արած և գառն աղքատութեան մէջ, անտուն ու անօթևան շրջումեն—ո՜հ, այնուհետև կարող չեմ յետ պահել արտասուքս»։

Արկիսի վերայ դող ու սարսափ եկաւ. նա շուտով բաց խթեց իւրեանից աղջիկը, անշարժ աչքով նայեց նորա վերայ և թոթովեց.

«Ո՞վ Թշուառական. այդ ինչ ես խօսումմ։ Մի՞ թէ գուշակումես դու—»

«Ի՞նչ, սիրելի հայր իմ», հարցրեց Ֆելիսիտէն.

«Ոչինչ, ոչինչ չկայ», ասաց հայրը շուտով։ «Բարեաւ մնաս. այս երեկոյիս վերստին կը տեսանես ինձ»։

Նոանց որ և իցէ հայեացք շնորհելու նորան, հայրը հեռացաւ Ֆելիսիտէից։

Ֆելիսիտէն մնաց արտասուելով։ Նա մտածումէր թէ հօր տհաճութիւնը յարուցել է իւր վերայ, բայց չգիտէր թէ ինչով։ Նա նստաւ պատուհանի մօտ և պլուխը տրտմութեամբ տուեց ձեռին։

«Երեկեան օրը այնպէս գեղեցիկ էր» շընչեց քթի տակին. «բայց այսօրուան օրա չկամի այնպէս վերջանալ։ Հայրս բարկացած է իմ և բարի Գուստաֆի վերայ։ Լուդովիկոսը որ այսօր պիտի մի ուրախ համբաւ բերէր ինձ, չէ գալիս։ Արդէն տասներկու ժամն է, և նա խոստացաւ կանուխ արդէն եւ բնել։ Գուցէ ծերուկի պարոն Քուրրիերը հաւան չէ նորա ընտր ութեանը, և այնուհետև ես կը լինեի անբաղդ, քանի որ կենդանի էի»։

Այնչ դեռ աղջիկը այսպէս խօսումէր ինքն իւր հետ, ընդհատեց նորան սպասաւորը, խնդց տալով պարոն Լուդովիկոս Քուրրիերի գալուստը»։

Նա իսկոյն վեր թռաւ։ Ինչ որ մի փոքր յառաջ պատահել էր, մոռացուեցաւ, և ուրախութեան արևափայլութիւնը վերստին պայծառակերպեց նորա դէմքի սիրելի գծագիրքը։ Աղջիկը շտապեցաւ իւր սրտի սիրածի հանդիպ, մինչև դուռը, և յառաջ քան թէ երիտասարդը ակնածութեամբ ողջունել էր նորան, հարցրեց աղջիկը.

«Ի՛նչ լուր էք բերել ինձ, սիրելի պարոն Քուրրիեր։ Խոսել էք ձեր հօր հետ։ Ի՛նչ պատասխանեց ձեզ։ Հաւանե՞ն է ձեր ընտրութեանը. խնդրեմ ան-

յապաղ ասել ինձ։ Տեսանուամբ ահա, որ ես անհամբերութենից պրծել կամի հալումաշ լինել»։

Երիտասարդը համբուրեց նորա ձեռը և ապա պատասխանեց, բայց ոչ գուարթ ձայնով։

«Լա՛ւ, սիրելի Ֆելիսիտէ, խօսեցի հօրս հետ, բոլոր սիրտս դուրս թափեցի նորա առաջև»։

«Եւ նա՞»։

«Նա նայեց իմ վերայ տրտում հայեացքով, երբ որ Ձեր անունը տուեցի»։

«Ո՜վ իմ Աստուած, ընդէ՞ր այդպէս»։

«Ո՛չ, չգիտեմ ես։ Ապա ասաց նա. Ա՛յժմուս, իմ որդի, կարող չեմ տակաւին մի որոշ պատասխան տալ։ Համբերիր դեռ ես մի փոքր ժամանակ։ Ես սիրում եմ քեզ և կամիմ միայն քո բաղդաւորութիւնը։ Անօգուտ եղաւ իմ խնդիր ու աղաչանքս. նա ոչինչ չասաց ինձ և վերջապէս խնդրեց որ իմ սէրս դէպ ի Ձեզ ամենայն մնայղուց, այս և իմ քոյր Մարգարիտից այնքան երկար ծածուկ պահեմ, մինչև ինքը թոյլ կը տար ինձ խօսել»։

Մանուկ աղջկայ աչքերը դարձեալ լցուեցան արտասուքով։

Վշնքշուելամբ սիրող երիտասարդը փորձ փորձեց միխիթարել նորան, «Տակաւին չկայ պատճառ վհատանալու», ասաց երիտասարդը, բռնելով նորա ձեռը։ «Իմ հայրս, անտարակոյս, կամի նախ և յառաջ փորձել իմ սէրը, և այս է յապաղանքի պատճառը։ Գուցէ, առանց մի խօսք ասելու ինձ այդ մասին, կը հանդիպի նա պարոն Մարկիզ Օրմօնդին և ապա կը ծանօթանայ ձեր հետ երես առ երես։ Ես գիտեմ յառաջուց, որ նա կը զմայլուի ձեր տեսութեամբ։ Պատ տեսանուամբ ահա, սիրելի Ֆելիսիտէ, որ իմ սիրտս քաջայոյս է։ Վեր քարշեցէք և դուք ձեր ցած թոյլած գլուխը և թողէք, որ ձեր սիրուն աչքերը դարձեալ պայծառութեամբ ճառագայթեն իրենց լոյսը։ Ես հոգուս աչքով տեսանում եմ արդէն հարսանիքի դահլիճը զարդարած. մոմերը վառվում են — նուագարանը հնչում է — հալարաւոր շնորհաւորութիւնք լսվում են նորափեսայի և նորահարսի չորս կողմ։ Բայց իմ ականջս ոչինչ լսում չէ։ Ես խորասոյզ իմ եղած իմ հրաշագեղ հարսի գնութեան մէջ, որպ գնայլեցուցիչ գեղեցկութեանը համեմատ չէ ոչ մինը ներկայ գտանուած կանանցից»։

Երբ որ պատանի Քուրթիերը կէս ժամից յետոյ հրաժարուեցաւ Ֆելիսիտէից, դարձեալ վառուեցան նորա թուշերը այնպէս վարդակարմիր, ինչպէս յառաջընթաց օրին, դարձեալ ուրախութեան ժպտում մը սկսաւ խաղալ նորա ներքատուշ շրթունքի չորս կողմով։ Եւ արդարև նորա սիրտը վկայեմբեր, թէ անկարելի էր, որ նա սիրելի լինելով ամենեցուն որ ծանօթ էին իրեան, չափի գտանէր ալևոր պարոն Քուրթիերի շնորհը։

Մի քանի օր զննի այս աղջկայ և երիտասարդի հանդիպմանը միմեանց, Մարգարիտ քուրքիները գտանվումէր այն մատուռի մէջ, ուր նա սպասումէր շուտով տեսանելու իւրեան, Լաննոյ պատկերահանի անունով ծանօթ եղած, Գուստաֆ Օրմոնդը։

Մատուռը, որ ամրոցի առաջին կալուածատեարքը գործ էին ածել իբրև ժամատուն, Մարգարիտի կարգադրութեամբ յեղափոխուել էր մի դամբանարան։ Փոքրիկ սեղանին կից մնա կառուցած էր մի պարզ յիշատակարան սպիտակ մարմարիոնից, որոյ վերայ կախած էր մի կանթեղ, մեայլ լոյս տալով խաւար տարածութեանը։ Այս յիշատակարանի տակ հանգստացնում էին հողեղէն նշխարքը նորա հանգուցեալ ծնողների։ Մարգարիտը իւր հայրադրի, պարոն քուրքիների հարստութեամբ կարողացել էր իւր մօր ըզմրսած նշխարքը բերել տալ Խտալիայից և իւր հօր ոսկրները հանել պիւզանդական գերեզմանատնից, ուր տխիսիւսած էր այն անբաղդ համբերողը որ իւր ջարչարանքից տանջանարանումը տասերկու տարի յառաջ մեռած էր։ Մարգարիտը այս առաւօտուս հրամայել էր զարդարել յիշատակարանը գալար ծաղիկներով։ Երբ որ նա այսօր, ինչպէս ամենայն օր, աղօթել էր այս տեղ, ուղղեց իւր խօսքը բարձրաձայն դէպ ի մեռածները.

«Ահ, ներեցէք ինձ, պատուական ննջեցեալք», ասաց աղջիկը, «որ ես մինչև այժմ կարող էի նուիրել ձեզ միայն արտասուք և գալար պսակների սիրալից զարդ։ Շուտով յոյս ունիմ ձեր հոգիներին մի այլ ընծայաբերութիւն առնել։ Ահ հոգիդ իմ հօր, թոյլ շընջէիր դու այս ժամուս, թէ ճշմարիտ է իմ սրտի գուշակութիւնը։ Ո՜հ, ոչինչ ձայն գալիս չէ այն միւս աշխարհից։ Բայց նոյնքան ևս բարձրաձայն հնչումէ իմ կուրծքի մէջ և ասումէ. ժամանակը մօտեցել է, երբ ահաւոր գաղտնիքը բոլորովին յայտնուելու էր։

Հազիւ թէ այս խօսքերը ասել էր, և ահա երեք անորոշ գարկողութիւնք լսելի եղան մատուռի դրան վերայ։

«Լաննոյն է» ասաց աղջիկը։ «Նա հաւատարիմ կը կենայ իւր խօսքին, եւ իմն կամիմ ևս հաւատարմութեամբ լցուցանել»։

Նա իսկոյն շտապեցաւ դէպ ի դուռը և բացեց։

Աղջիկը զարմացած էր, երբ որ փոխանակ նորան, որին սպասումէր, տեսաւ պարոն քուրքիների ներս մտանելը մատուռի մէջ։

«Ներիր, իմ զաւակ, որ գուցէ շփոթութեամբ քեզ քո ջերմեռանդութեան մէջ», ասաց ալևորը։ Բայց ես ունիմ մեծակշիռ բաներ վերայ խօսելու քո հետ։»

Մարգարիտը դժուարութեան մէջ, աչքը դէպ ի յատ թողեց։

«Կարող չէիք ձեր խօսելիքը յետ ձգել մինչև մի այլ ժամ, Տէր իմ», ասաց աղջիկը։ «Ես սպասումեմ այս տեղ մի մարդու»։

«Ոչ կամէի հանդիպել քեզ քո սպասած մարդուց յառաջ։ Պարոն Լաննոյն է. այսպէս չէ՞»։

«Ա՛յ, հայր իմ»։

Պարոն Քուրքիները բռնեց նորա ձեռը և ուղղեց նորա վերայ մի ծանրաբարոյ հայեացք։

«Ես գուշակումեմ քո սրտի խորհուրդը» պատասխանեց նա։ «Դու կամիս այդ երիտասարդը քո դիտաւորութեան գործիք շինել»։

«Ես կամիմ նորան զորանոյ մեծարել, ասաց նա իսկոյն»։

«Ես նորան գուցէ թէ, ձախորդութեան, մահու մէջ ձգել»։

«Կայ մեռանելու չէ միայն»։

«Ո՛չ, ո՛չ, բանը հասանելու չէ մինչև այդ տեղ»։

Պարոն Քուրքիները լռեց մի քանի րոպէ։ Նա մտածումէր իւր որդեգիր Լուդովիկոսի վերայ, որ, ինչպէս գուշակած պիտի լինի ընթերցողը, արդէն հաւատացել էր նորան, թէ մի անսահման սիրով սիրումէ Գելխատէն, Օրմծնդի աղջիկը, և թէ առանց նորան այլ ևս գտանելու չէր ոչինչ բաղդաւորութիւն երկրի վերայ։ Ալևորը ամենայն սրտով անձնանուէր էր երիտասարդին և կամէր այժմ փորձ փորձել, նորա ցանկութեանը կատարումն տալու։ Այս բանը հնարաւոր կացուցանելու համար, պիտոյ էր, որ Մարգարիտը հրաժարուէր իւր վըէժխնդրութեան դիտաւորութենից։ Ինչ որ ևս առաւել պատճառ էր տալիս ալևորին այսպէս վարուելու, այն էր, որ նա երկբայութիւն ունէր պարոն Օրմծնդի մեղապարտութեան մասին։ Մի այնպիսի յանցանքի, որով Մարգարիտը պարտաւորումէր սպանել, կարողանում չէր ալևորի անարատ սիրտը ընդունակ համարել որ և իցէ մարդկային հոգի։

Մարգարիտը, որ զարմացած նայումէր ալևորի վերայ, առաջինը եղաւ, որ ընդհատեց լռութիւնը։

«Դուք չէիք, որ խոստացաք ինձ միշտ օգնական լինել այս գործի մէջ», հարցրեց աղջիկը։

«Ա՛յո խոստացայ ևս մի օր, սրտիս խռովութեան մէջ, պատասխանեց ալևորը։ Բայց տարիքը, որ սպիտակեցրել են մազերս, մեղմացրել են և սիրտս։ Երբ որ երկնային տնօրութիւնը կամենումէ պատժել մի մահապարտ, նա կարօտ չէ ոչինչ մարդկեղէն վրէժխնդիր ձեռքի»։

«Մահապարտը ապրումէ փառքի ու պատուի մէջ» ձայն արձակեց Մարգարիտը։

«Դուցէ նոյնպէս տանջուելով խղճից և զղջալով։ Ես կարող էի մի օր իմ դաւակների և թոռների մէջ խաղաղ հոգով սպասել իմ վախճանիս, եթէ դու հրաժարուէիր քո ոջբայրի դիտաւորութենից, որ մեզ ամենեցուցս կարող էր կորուստ պատրաստել»։

«Դադարեցէք, հայր իմ։ Դուք ցաւացումէք իմ սիրտը։ Բայց ես կարող չեմ կէս ճանապարհի վերայ կանգնած մնալ — ես պիտի յառաջ գնամ այդ շաւղի վերայ, ուր ոտք եմ կոխել — պիտի յառաջ գնամ»։

«Ահ անբաղդ դու։ Ուրեմն խոստացիր ինձ գնել այ, որ դու լքուցանելու չէիր քո վերջին վճիռը, մինչև քո եղբայր Լուդովիկոսը իւր ընտրած աղջիկը ունէր իւր գրկի մէջ»։

«Ո՛նպէս, Հայր իմ. իմ եղբայրս, հաղիւ թէ տասն և ութ տարեկան, կամի՞ արդէն ամուսնանալ։ Եւ դուք կամիք տալ ձեր հաւանութիւնը այդ գործին»։

Պարոն Քուրբիերը գլխով արեց։

«Այո՛, կամիմ, իմ զաւակ»։

«Ուր ո՛ւմ է այդ աղջիկը. ինչ անուն կրումէ նա», հարցրեց Մարգարիտը։

Ընկերը պատմեց ինչ որ Լուդովիկոսը հաւատացել էր նորան, այսինքն թէ ինչպէս նա ծանօթացել էր Ֆելիսիտէին և սիրել էր նորան և գտել էր նորա մտերիմ սէրը։ Բայց մանուկ աղջկայ և նորա ազգատոհմի անունը չասաց, իսկ Մարգարիտը, շատ ու շատ զբաղուած լինելով իւր սրտի հոգածութեամբ, չկամեցաւ անպատճառ իմանալ այդ գաղտնիքը։ Այլ և Լանեոյին ամենայն բոպէ սպասումէր աղջիկը, որ և այս պատճառով ցանկանումէր, որ հայրը շուտով հեռանայ։

Վերջումը հարցրեց հայրը թաց աչքով.

«Երդեօք կամիս դու կատարել իմ խնդիրը, իմ զաւակ»։

Մարգարիտը իսկոյն տուեց նորան ձեռը։

«Այս իմ եղբօր բաղդաւորութեան համար յանձն կ'առնում ամենայն զոհանք», ասաց աղջիկը. «բայց կարող չեմ զանց առնել այն բանը որ իմ սիրտը հրամայումէ ինձ։ Թող Լուդովիկոսը ամուսնանայ և ինչքան կարելի է շուտով, իմ հայր, որպէս զի ես իմ ներքին տանջանքից չազատհարուէի»։

Ընկերը հրաժարուեցաւ նորանից այսպիսի խօսքերով.

«Արդին դարձեալ ասեմ քեզ, ով Մարգարիտ, Աստուած չկամի վճռժինդրութիւն։ Քո ծնողների հոգին ներել են։ Վերին և դու, վասն իմ խաղաղութեան, ի սէր քո եղբօր»։

Հաստ ու շատ մեծարելի տղամարդի ազդող, մեղմատուր խօսուածքը, նորա արտասուախառն աչքը յարուցել էին խռովութիւն և տարակոյս աղջկայ սրտի մէջ։ Այս առաջին անգամն էր, որ նա սկսաւ խորհել, արդեօք հաճո՞յ էր Աստուծուն իւր դիտաւորութիւնը ձախորդութեան մէջ ձգելու Օրմնեղի ազգատոհմը։

«Երդեօք այդ տղամարդը ստութեամբ զրկանու՞մ», քթի տակ խօսեց աղջիկը. արդեօք նորա խիղճը — այս օձի կծածը, ասում են, թէ գերազանց է մնհոու բոլոր տանջանքից»։

Ցայ թիկն տուեց գերեզմանաքարի վերայ և երկար միջոց խորասուզուած կացաւ մտածութեան մէջ։ Ցանկարծ վեր թռաւ նա։ Իւր հօր պատկերը երևել էր նորա հոգուն։

«Ոչ, ոչ», ձայն արձակեց նա. «տանջող ու չարչարող հոգիքը չեն շրջապատել այն մեղապարտին. նա նստած է հպարտ ապարանքի մէջ, իւր գեղից սեղանի վերայ։ Նորա երևելությքը ուտումեն մեր ստացուածքը — նոքա հափշտումեն թաւիշ ու մետաքս մեր հարստութենից — ոչ՝ նչ ներողութիւն, ոչ՝ նչ»։

Դարձեալ զարկուեցաւ մուտուի դուռը։

Ներս անգամն նա էր, որին սպասումէր աղջիկը։

Մարգարիտը մուտուց նորան ձեռը։

«Խարուկ լինի ձեր գալուստը այս հանգստարանումս», ասաց աղջիկը։

«Ո՛վ է հանգստացած այս տեղ», հարցրեց երիտասարդը։

«Իմ ծնողների հոգեղէն նշխարքը» պատասխանեց աղջիկը տխուր ձայնով։

Դուստրը զարմացած էր։

«Ձեր ծնողների՞ Ո՛վ է ապա պարոն Քուրթիերը»։

«Իմ հայրս, սիրոյ կապերով, բայց ոչ արիւնի։ Դուք զարմանումէք, իմ բարեկամ, և ունէիք տեղիք հարցանելու, ինչու այս գաղտնիքը վաղուց յայտնել չէի ձեզ։ Նախ և յառաջ պիտոյ էր ինձ ձեր սրտի խոստովանութիւնը ընդունել, մինչև կարող էի ձեզ ընծայել իմ բոլոր վստահութիւնը։ Երէկ ձեր շրթունքը հրատարակեցին ձեր վստահութիւնը. այսօր — այս տեղ — պիտի հրատարակեն իմն իմ շրթունքը։ Ա՛յո, Լաննոյ, ես հաւանսիրտ եմ քեզ — երբէք լինելու չեմ մի ուրիշ տղամարդի ամուսին»։

Երիտասարդը ուրախալից բացագանչութեամբ, «ո՛վ Մարգարիտ» ընկաւ նորա ոտերը։

Աղջիկը իսկոյն բարձրացրեց նորան։

«Ա՛յո՛, Լաննոյ, ես սիրումեմ Քեզ տաք ու մտերիմ կերպով։ Եթէ Ձեր սէրը նոյնպէս մեծ է, ապա լինելու էիք ինձ օգնական ընդդէմ այն մարդուն, որին ատումեմ ես իմ սրտի բոլոր զօրութեամբը»։

«Մի պլանդակ գաղան միայն արժանի էր ձեր ատելութեանը, ազնիւ Մարգարիտ»։

«Լսեցէք ինձ և ապա դատեցէք»։

Աղջիկը աւելի մօտ քարշեց նորան դէպ ի գերեզմանաքարը։ Երկոքեան նստան յիշատակարանի աստիճանների վերայ։

Ապա հետև Մարգարիտը պատմեց իւր մանկական կեանքի տրտում անցքերը, նա նկարագրեց իւր ծնողների բաղդատութիւնը մի ժամանակ, իւր հօր չարչարանքը տանջանարանի մէջ, նորա անիրաւաբար դատապարտուիլը և յետոյ մեռանելը Խոպիայի սահմանի մօտ։

«Ապին ժամանակից» յաւելացրեց աղջիկը իրրև եզրափակութիւն, «մի հատ մտածութիւն տիրել է իմ բոլոր սրտիս, հատուցումն գործել այն պլանդակ գաղանին որ իմ անբաղդ հայրս ձգել է թշուառութեան մէջ։ Իմ

Հօր սուրբ դիւռ մօտ երդուել եմ ես վրէժխնդիր լինել նորան։ Ա՛յս երդումն կրկնել եմ այն տեղում, ուր թաղելին նորան այն միջոցին, իմ, ցաւից ու տրտմո՛ւթենից ծանրութեամբ սպանած մեր դադաղի մօտ. դոյն այդ երդումը երեկոյ ու առաւօտ խառնուել է իմ աղօթքի հետ։ Ես կը կրկնեմ այդ երդումը, մինչև յաւիտենական արդարութիւնը այն վատթարահոգին կը տայ իմ ձեռս։ Ե՞ՀԷ Աստուած ողորմած է ինձ, մօտ է ժամը, երբ հատուցման սատակիչ հրեշտակը կը քարշէ վրէժխնդրութեան սուրը մատնողի գլխի վերայ»։

Մինչ Մարգարիտը պատմում էր այս բանս, Գուստաֆը գունաթափ և լուռ նստած էր նորա կողքին։ Երբև մի հեռաւոր մռայլ երազ ցաւ նորա սրտի մէջ մի յիշատակ իւր մանկութեան օրերից։

«ՈՎ իմ Աստուած», խօսում էր մի ձայն նորա մէջ. «Ինչ որ այդ աղջիկը իբրև խորհրդ հաւատում է ինձ, չէ՞ ինձ անյայտ։ Ես տասներկու տարեկան տղայ էի, երբ որ ազնիւ Օրսանժը իւր տրոցում, ուր ես իմ մօր և Ֆելիսիտէի հետ ապրում էինք, բանտարկու եցաւ, չարչարուեցաւ և դատապարտուեցաւ։ Եթէ այս աղջիկը Մարգարիտն է, որպ հետ ես այն ժամանակ խաղացել էի, դա մի գեղեցիկ շառաւիղն երեխայ էր մեղ օդանաղերով— բայց դա ասվում էր Բէատրիս և ոչ Մարգարիտ։ Եւ մի՞թէ իմ հայրն է, որ պղպիսի յանցանքով մեղանչել է դէպ ի իւր բարեկամը, իւր բարերարը։ Աստուած իմ. պահպանիր խելքս վերաս։ Արիւնը քարանում է երակներիս մէջ, մտածելով թէ Բէատրիսը և Մարգարիտը մի և նոյն անձն էին — ո՛չ, ո՛չ. սա մի երազ է, մի ահաւոր երազ։

Երիտասարդը աչքերը լայն բացած, անշարժ նայում էր իւր սիրած աղջկայ վերայ, որ իւր վերջին խօսուածքի միջոցին բարձրացել էր տեղից և որպէս մի գունաթափ բարկացող հրեշտակ կանգնած էր նորա առաջև։ Որչափ երկար նայում էր երիտասարդը նորա վերայ, նոյնքան առաւել երիտասարդի գուշակութիւնը ստանում էր հաւաստութիւն. նա Քուրբիներեան Մարգարիտի մէջ վերստին գտել էր Բէատրիս դուստրը Բարօն Օրսանժի։

«Ո՛ր անունը այն մարդու, որ դու կարծում էս թէ Ձեր աղգատոհմի թշուառութեան պատճառն էր, ինչպէս է», հարցրեց երիտասարդը գողդոջուն շրթունքով։

«Ա՛յս ժամում ես կարող չեմ տակաւին ասել Ձեզ անունը», պատասխանեց Մարգարիտը։ «Ամեն բան մի՛ հարցանէք ինձանից, ով Լաննոյ։ Ես ունիմ իմ յատուկ պատճառը։ Բայց շուտով, շուտով կը լսէք այդ անունը, երբ որ միայն լսել էի դիմակը պարտատորի երեսից, այնուհետև կը շնորհեմ Ձեզ Ձեր սիրոյ արժանի վարձը։ Աչն վատթարահոգին պիտի ձեր ձեռքից ստանայ իւր արժանի պատիժը։ Երբ որ այս եղել էր, ապա կը փախչենք դէպ ի ճարտարութեան աշխարհը, որին փարագում Ձեր սիրտը ամենայն զօրութեամբ։ Ա՛յնուհետև, իմ Լաննոյ, կը յուսանեմ Ձեզ, թէ

ինչպէս կարող էր սիրել մի կին, որ այնքան ահաւորապէս կարողացած էր ատել։ Դու կը լինիս իմ տէրս, իմ Թագաւորս, իմ աստուածս։ Ո՜վ դու, զղալով հետ մի քարշուկիր վրէժխնդրութեամբ վառուածիցս. այս աղջիկը էր մի օր հեզ և երկիւղած, որպէս նորա մայրը։ Քո բաղուկներով զրկախառնած, քո կուրծքի վերայ գարձեալ կը գառնայ գա այնպիսի, երբ որ արդէն իւր անբաղդացած հօր վրէժը հանել էր։ Կը գաք դուք, իմ բարեկամ, երբ որ կանչեմ Ձեզ»։

Վաստաֆը առանց խօսելու խոնարհեցաւ նորա ձեռի վերայ և համբուրեց նորան։ Երկիւղը, մի գուցէ նա տեղեկանար զարհուրելի ստուգութեանը, պահումէր նորա լեզուն կապած։

«Ի՛նչպէս. Դուք ոչի՞նչ խօսք պատասխանում չէք ինձ», հարցրեց Մարգարիտը։

«Ներեցէք», թոթովեց երիտասարդը. «ինչ որ դուք իրրև խորհուրդ հաւատացիք ինձ — դղրդել է իմ սրտի հիմքերը — ես խոր ախտակից եմ ձեր հետ, իմ աղնիւ Մարգարիտ, այն ցաւերին որոց դուք համբերել էք և որոց տակաւին համբերում։ Ընդունեցէք իմ հաւատարիմ խոստումը որ, Թող պատահէ ինչ կամի, այն սէրը որ ես ղգում եմ դէպ ի ձեզ, կարող չէ խախտուիլ ոչինչ ճակատագրի ըմբռնութեամբ։ Ճակատագիրը կարող է մեզ այս կեանքում բաժանել միմեանցից, բայց ոչ մեր սրտերի դաշը քակտել։ Բարեւ՛ մնացէք։ Մի քանի օրից յետոյ միւսանգամ կը տեսանենք միմեանց»։

Վարձեալ միանգամ սեղմելով շրթունքը նորա ձեռին, հեռացաւ երիտասարդը շուտ քայլերով մատուռից։

Մարգարիտը զարմացած նայումէր նորա յետքից։

«Լաւրթ լան», ասաց աղջիկը։ «Երիտասարդը այնպէս շուարուած, այնպէս վհատուած էր։ Մի՞թէ նա՛ ևս կամէր անհաւան լինել իմ վրէժի ախտին, ինչպէս պարոն Քուրբիւրը։ Մի՞թէ չկամէր նա ինձ օգնական լինել պատուհասելու իմ մնհուշափ Թշնամիս։ Եթէ այդպէս լինէր, ապա սխալուած էի ես և նա իմ սիրոյն անարժան է. այնուհետև ես ինքս միայն կը դիմեմ դէպ ի իմ նպատակը, միայն կը լցուցանեմ իմ երդումը։

Վաստաֆը երկար ժամանակ թափառումներ անտառի մէջ, մինչև վերադարձաւ դէպ ի փարիզ։ Այսուհետև ոչինչ երկրայութիւն չմնաց նորա հոգու մէջ, Թէ Քուրբիւրեան Մարգարիտը էր Բէատրիս դուստրը Օրսանժի, իւր մանկութեան խաղընկերը։ Նա չէր ճանաչել աղջիկը, որովհետև մի ժամանակ իւր հօրից լսել էր Թէ Բարօն Օրսանժի զաւակները վաղուց մեռած էին։ Աղջիկը կարողացել չէր երիտասարդի մէջ վերստին ճանաչել Գուստաֆ Օրսինդին, որովհետև ծաղկացաւից նորա երեսը շատ ու շատ փոխուել էր և նա իրրև մի աղքատ պատկերահան հանդիսացել էր աղջկան և գտել էր նորա սէրը։ Երիտասարդը երկար միջոց խորհրդածելով, որոշեց իւր մէջ գործ դնել սմենայն հնար վերահաստատ լինելու ահաւոր գաղտնիքին։ Մի խոր-

հուրդ, որպէս թէ իւր հայրը եղած էր Օրսանժեան ազգատոհմի կարուսիչը, գարշելութեամբ մերժեց իւրեանից: Մարգարիտը, մտածումէր երիտասարդը, մի թշուառ սխալանքի մէջ է: Աստուած օգնական կը լինի ինձ, լուսաւիպել կացուցանելու այդ սխալանքը: Ընդհակառակն ամենայն ինչ կը փոխուի դէպ ի լաւը: Իմ հօր կամեցողութեանը ամուսնացնելու ինձ Հօրտնեղիա Յոհանի հետ, դէմ կը դնեմ իմ պատկառանքով, բայց հաստատ ու անփոփոխ անհաժարութիւնը: Եթէ իմ հօրս ասեմ Մարգարիտի անունը, եթէ համոզեմ նորան անձամբ անձին ծանօթանալու նորա հետ, եթէ ասեմ նորան, թէ այդ աղջիկը է իւր անբաղդ բարեկամ Օրսանժի դուստրը, այնուհետև նա տեղիք կը տայ և կ'օրհնէ մեր ամուսնական դաշը: Թէև նա հպարտ ու պատուասէր է, սակայն նա սիրումէ իւր զաւակները ամեն բանից առաւել:

Երիտասարդը իւր ահ ու դողով լցուած սիրտը հանդստացնելով այսպիսի յոյսերով, վերադարձաւ իւր հօր ապարանքը: Նա գուշակում չէր, թէ արդէն մի քանի օրի մէջ այս բոլոր յոյսերը պիտի չիք դառնային ամենազարհուրելի կերպով:

Ա. Նալբէանց.

(Շարունակութիւնը միւս տետրակում:)

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԵ ՔՆՆՈՒԹԻՒՆ Ե ԿԱԹՈՂԻԿԵԱՆ ՐԵՖՈՐՄԻ ԻՏԱԼԻԱՅԻ ՄԷՋ.

(PROGRÈS DE LA RÉFORME CATHOLIQUE EN ITALIE.)

Revue britannique 1862. 3-e livraison.

(Շարունակութիւն.)

Թոմմինիոյ իդէայքը պիտի անպատճառ գտանէին Պիոս իններորդի համակրութիւնքը, նորա առաջին ջանադրութիւնների ժամանակումն. Նոքա յարմարաւոր էին այն անորոշ ցանկութեանը որ ունեցել էր այս քահանայապետը, եկեղեցւոյ յաղթութեան պարծանքը կցորդելու աղատութեան յառաջադիմութեան հետ: Թոմմինիոյ մտածութեան կարգը երևումէր թէ ճարտարապէս զուգադրումն կրօնական և ժողովրդապետական հոգին այնպիսի կշռով, որ կարող էր թոյլ տալ Եկեղեցուն վերստին ստանալ իւր ազդեցութիւնը ժողովրդի վերայ, առանց մի բան կորուսանելու իւր հոգևոր իշխանութենից: Թոմմինին, իբրև պատգամաւոր կարոլոս Ալբերտոսի (Վիկտոր Էմմանուէլի հօր) կողմից, եկաւ Հռոմ 1848 թուական. և այնպիսի քաղցր ընծհ գտաւ Պապի առաջև, որ սա կարգեց նորան անգամ ինկվիզիցիօնական խորհրդարանի, այլև տեղեկութիւն տուեց նորան թէ մտադիր էր վերացնել նորան դէպ ի կարդինալական աւագութիւն, գալոց-Եպիսկոպոսական ժողովի մէջ: Այս հաղորդակցութիւնը այնքան դրական էր, որ Թոմմինին կարծումէր թէ պիտոյ էր նորան ունենալ մի տնարարութիւն, այս արժանաւորութեանը պատշաճ: Բայց վերայ հասան այն ձախող անցքերը որ յետ ձգեցին կարդինալների ժողովը, և որոց հետևեցան արիւնոտ կռիւներ, վերջանալով Պիոս իններորդի փախստեամբ դէպ ի Գայետա և հիմնարկելով մի յետադիմաղայ հակառակութիւն ժամանակի հոգուն: Այս րոպէիս ահա մի քանի կարող մարդիկ, որ այնուհետև վատիկանում (Պապի պալատում) միշտ թագաւորել են բացարձակ իշխանութեամբ, առաջին անգամ յաջողեցաւ տիրել Պապի հոգուն որ այնուհետև խորին ցաւի մէջ էր տեսանելով իւր ազատասիրական յոյսերը ունայնացած. Թոմմինին մանաւանդ

շատ ատելի էր այս մարդերին, որ գուշակուէին Նորա և իւր նմանների մէջ մի վտանգ որ շատ աւելի երկիւղալի էր քան թէ մի ղէնուորուած ապստամբութեան վտանգ: Նոքա տեսանուէին Րոսմինիու մէջ ջատագովը այնպիսի իդէաների որ ձեռնտու էին տհաճեցնելու այն հոգիքը որ այնքան տրամադրուած էին դէպ ի այն ժամանակի մէջ եղած կացութիւնը իրերի: Այսպէս, միաւորեցին նոքա իւրեանց բոլոր ջանքը, ազդելու Պապի մէջ երկբայութիւնք Րոսմինիու ուղղահաւատութեան վերայ, և պատկերացնելու Նորան Պապի աչքումի իբրև մի մարդ, որ իւր գործերով, եթէ ոչ դիտաւորութեամբը, վտանգի տակ էր ձգելու եկեղեցին և քրիստոնէական ընկերութիւնը: Պիոս իններորդը իւր սովորական թուլութեամբ ունկն մատուց այնպիսի խօսքերի որ հաճոյ էին իւր յատուկ մնատանջութեանը, և որպէս առաջին հետեւանք այս գաւաճանութիւնների, Րոսմինիու կարգուիլը կարդինալ, մնաց իբրև լոկ առաջարկութիւն: Այս հարուածը որ անմիջապար հասաւ Նորան, բաւական չէր նորա թշնամիներին: Հին կարգերի սիրող խորհրդակիցքը Պապի ատուէին այդ մարդը, բայց նոքա և ս առաւել ատուէին Նորա սկզբունքը (հիմնական կանոնքը), համարելով դորանց ննջասոր, որ և ստացել էին նոյնչափ աւելի ղօրութիւն, որչափ մի քանի միջոց իւրեանց հեղինակի հետ միասին գտել էին տուրը հօր շնորհը: Ոչինչ կարող չէր լցուցանել նոցա դառնացած սրտի ցանկութիւնը, եթէ ոչ մի դատապարտութիւն, այնպիսի, որ սպասաւորէր որպէս դեղձափ այն թունին որին այնպէս անխոհեմաբար թոյլ էին տուել շրջան առնուլ (պտտուիլ): Այսպէս պատճառ տուեցին Պապին հրամայելու, որ Րոսմինիու գրուածքը ենթարկուէին քննութեան դատաստանի. այդ գրուածքը արդէն ձգած էին մի շատ թշնամական կրիտիկայի տակ, Գրիգորիոս տասնեվեցերորդի սահմանակալութեան միջոցին. բայց այս քահանայապետը, որ իւր մանկութեան տարիներում հաստատել էր բարեկամական յարակցութիւնք Րոսմինիու հետ, հրատարակեց իւր անձը նորա պաշտպան, երբ որ նա բարձրացել էր դէպ ի տուրը սահմանը: Կարդինալների ժողովի մէջ որ եղաւ 1845 թ. մարտի 1 ում, Պապը ցոյց էր տուել իւր դեռ բազոյն իշխանութիւնը, հրապարակաւ լուսաբեան կնիք դնելով այն վճռաբանական խնդիրների վերայ որ մի առ մի թուած էին ամբաստանութիւնների մէջ ընդդէմ Րոսմինիու կարծիքների ձգտողութեանը: Ներկայ հանգամանքիս մէջ նորա թշնամիքը յարձակուեցան նորա վերջին գրուածներից երկուսի վերայ, այսպիսի մակագրութեամբ le Cinque Piaghe della Chiesa և la Constituzione secondo la Giustizia sociale, փոքրութիւնների քաղաքական գրուած 1848 ին, որպէս ջատագովութիւն դաշնաւորական (ֆեդերալիստ) կազմուածոյ Իտալիայի մէջ: Այս գործերը ենթարկուեցան Նէապօլսի մէջ եղած առանձին ժողովի միաբանութեանը որ որոշում պատապարտելի գրեանքը. ժողովը արգելական վճիռ հրատարակեց, և Պապը հաստատեց դորան 1849 թ. Յունիսի 6 ին: Մի գործ ծանօթութեան արժանի, այն է

որ այս դատավճիռը ոչինչ ամբաստանութիւն հերձուածողութեան [1]) մասին մէջ չբերեց, այլ նա հիմնած էր միայն այն փաստի վերայ, թէ այս գրուածքը վտանգաւոր էին եկեղեցուն, մանաւանդ խօսքերի պատճառով, որ միտ դնելով ներկայ րոպէի հանգամանքին, տեղիք էին տալիս թիւր մեկնութիւններու։

Սակայն, Պիոս ԺԲ-ը երբոր հրամայեց որ սուրբ միաբանութիւնը աւելի հիմնաւոր կերպով քննէր Րոսմինիու բոլոր գրուածքը։ Այս գրուածքը բաղկանալով ոչ պակաս քան թէ երեսուն հատորից (առանց մէջ բերելու յետոյ հրատարակուած գործերը և միւս շատերը, տակաւին գրչագիր մնացած) պարունակութիւնը բանախօսութիւնը փիլիսոփայական մտահայեցութեան ամեն մի ճիւղի վերայ։ Հարցաքննութիւնքը, որոց տեղիք տուեցին այդ գրուածքը, տեւեցին չորս տարի, և այդ ժամանակի միջոցում ենթարկուեցան նոքա ամենայն տեսակ քննողութեան որ կարող էր երեւակայել ցենսուրայի խորհրդարանը։ Վերջին ընթացքը այս մանրաքրքիր հարց ու խնդրի եղաւ մինը այն ընթացքից որ սկսեալ Բենեդիկտոս տասն և չորսերորդից գործ դրած չէին, որ և յետ են պահում անսովոր և շատ մեծակշիռ դիպուածներուի համար։ Փոխանակ կարդինալապետին, նոյն իսկ պապը անձամբ անձին ներկայ էր ժողովի բազմութեան մէջ, որին յանձնած էր հրատարակել դատավճիռը պատժապարտուած գրքերի վերայ։ Մի փառաւոր յաղթական տօնախմբութիւն էր Րոսմինիու և նորա բարեկամների համար, երբ որ 1854 թուակ. Օգոստ. 10 ին, նորա հոգալարձուն (պրոկուրօրը), Պապի հրամանով, տեղեկութիւն ստացաւ, թէ այն գրուածքը որ ենթարկուած էին պղպիսի երկար հարցաքննութեան, ազատուած են որ և իցէ թիւր վարդապետութեան կասկածանքից, և թէ սուրբ աթոռը արգելք չէր դնում նորա աղատ տարածմանը։ Դատավճիռը բացայայտուած էր այսպիսի բառերով, Dimittantur opera Antonii Rosmini (*Թող արձակուին Անտոնիոս Րոսմինիու գրուածքը*։

Այս երկար հետաքննութեան միջոցին Րոսմինին ապրումէր տանձնացած մի կրօնաւորական տան մէջ, որ հիմնել էր ինքը Լագո-Մաջիօրէ ծովակի մօտ։ Եթէ նորա թշնամիքը երբեմն երեւակայել էին, թէ նա թոյլ կը տար իւր տհաճութեանը խլել ու տանել նորան դէպ ի տարապայման ընթացք որ կարող էր ձգել նորան եկեղեցու նզովքի տակ, նոքա պիտոյ է ան-

---

[1]) Մխալանութեան դատավճիռքը միշտ բացայայտումն հետեւեալ երեք ձեւերից մինովը. *Prohibeatur* (*Թող արգելուի*). — *Prohibeatur donec corrigatur aut expurgetur* (*Թող արգելուի, մինչեւ կ'ուղղագրուէր կամ կը սրբագրուէր*). — *dimittatur* (*Թող արձակուի*)։ Առաջին ձեւը գործածական է այնպիսի գրուածներուի համար որ վկայուած են որպէս հերձուածողականք և անբարոյական վարդապետութիւնք։ Երկրորդ ձեւը, երբ որ գիրքը թէեւ ինասակար, սակայն կարող էր ուղղագրուիլ, և երբ նորա հինական սկզբունքը չէին նեղհակ կաթոլիկեան հաւատին, մինչ երրորդը է մի դատավճիռ արձակման։

չափ շատ սիրալուած լինէին։ Րոսմինին շատ հեռի էր այն բանից, որ նախնեք Ջիորերթիու օրինակին։ Ռոսմինին լինելով ուղղափառ քահանայ և քրիստոնեայ փիլոսոփոս, ոչ թէ միայն իւր պաշտօնի վիճակով, այլև ընտրութեամբ, խոնարհելով թեքեց գլուխը ի ներքոյ անիրաւ հարուածների մի իշխանութեան, որ մեծարում էր նա, և առանց ընդդիմախօս լինելու, կամ թէ ներհակ պատճառներ մէջ բերելու, իւր սովորական ժրաջանութեամբ նուիրեց անձը իւր առաւել սիրելի ուսումնական պարապմունքին, իւր հաղորդակցութիւններին իւր սիրական աշակերտների հետ, և կառավարութեանը այն կրօնաւոր ընկերութեան որ հիմնարկել էր նա, մինչև որ մահը վերջ հասաւ, վերջ դնելու նորա երկիւղած կեանքին մի երկար ու ծանր հիւանդութենից յետոյ — 1855 թուակ. Յուլիսի 1 ին։

Թէ ինչ ազդեցութիւն պիտի ներգործէր Րոսմինին իտալական հոգու վերայ, կարելի է դատել, միտ գնելով հասարակութեանը որ նորան տեսութիւն էր երթում Լա Ստրեզա պատսպարանի մէջ, որ և օրհնուէր նորա խոսակցութիւնը ակնածութեամբ և մեծարանքով որ կը վայելէին մի մեծ վարդապետի։ Մեք նորա աշակերտների մէջ գտանում ենք անուանի մարդիկ ամենայն տեսակ ասպարիզում։ Նորա մահու մահիճը շրջապատած էր այնպիսի անձներով որոնց կեանքի հանգէսները էապէս տարբեր էին միմեանցից, զոր օրինակ բանաստեղծ Մանցոնին, Րուչիերօ Բօնգի, նորերումս ահտեղապիր Ֆարինիու կառավարութեան նէապօլսի մէջ, և գուստաֆ Կաւուր, աւագ եղբայրը մինիստրի, մինը նորա առաւել սիրելի բարեկամներից և կուսակիցներից։ Ահա պիտոյ է ասել, որ, թէպէտ մարկիզ Կավուրը երբէք խղճմտել չէ գործունէապէս պաշտպանել խորհրդարանի մէջ հիմնական սկզբունքը իւր հռչակաւոր եղբօր, սակայն մեք մտածումենք թէ նա հաւատարիմ է մնացել իւր սրտի կրօնական վկայութիւններին, այնպէս որ նա տակաւին ամենայն տարի առանձնանում էր Լա Ստեզայի մենաստանի մէջ։

Ա.ԺԴ պիտի ծանօթութիւն տանք այն կրօնական կարգի մասին, որ հիմնարկել է Րոսմինին։ Արդէն 1828 թուականին յղացել էր իւր մէջ մի նոր հոգևոր կարգի հիմնարկութիւն, բայց տասն տարի եկան ու գնացին, մինչև կարողացաւ նա Հռոմի պալատից ստանալ հանդիսաւոր հաւանութիւնը որ հարկաւոր էր, այս կարգին տալու մի օրինապաշտպան դրութիւն եկեղեցւոյ աչքում, — տասն տարի ծանր հարցաքննութեամբք, որ տասն և վեցերորդ Գրիգորիոս Պապի բարեկամութեան շնորհովը դէպ ի Րոսմինին աւարտուեցան բարեյաջող եղբակացութեամբ։ Կանոնները այդ «Քրիստոնէական սիրոյ միաբանութեան» ինչպես ասում Րոսմինիու կարգը, պարունակում են ինչ ինչ պայմաններ որ հակառակ են բոլոր միւս կրօնական հասարակութիւնների կանոնագրութիւններին։ Մեք կարող չենք աւելի լաւագոյն ընթանալ, քան թէ տալով այս տեղ համառօտութիւնը այն յայ-

տարարութեան, որ հրատարակուել է Հայր Լօքհարթի հաստատողական թոյլտուութեամբ։

Յոսմինիոն երևումէր թէ հիմնարկել մի կրօնական միաբանութիւն, որոյ մէջ չլինէր ոչինչ անսովոր բան, այլ ուր ամենայն ինչ կանոնաւորուած լինէր Աւետարանի մաքուր և տիեզերական հոգով, է մի առաքելութիւն որ Քրիստոսը դրել է ամենայն քրիստոնէի վերայ, որ յօժարամիտ էր ուրախութեամբ յանձն առնուլ զորան... Եւ նա սկսաւ նկատել, որ կարելի էր հիմնարկել մի ընկերութիւն, որոյ անդամքը դնէին իւրեանց առաջև իբրև միակ և անպայմանելի նպատակ իւրեանց սեփական, բարոյական ու կրօնական կատարելագործութիւնը... Այնուհետև պիտոյ է զգալ հաւատարապէս թոյլ տային բոլոր բնական հետևութիւնքը այս նպատակին։ Եւ որով հետև, կատարեալ արդարութիւնը գտանելու համար, մեք պարտական ենք սիրել և լցուցանել աստուածային կամքը ամենայն բաների մէջ, և այս աստուածային կամքը պահանջումէ, որ մեք պարզութեամբ և խոհեմութեամբ ջանադիր լինէինք առնելու մեր ընկերներին ամենայն բարի, որ կարելի էր մեզ, առաջարկուած միաբանութեան անդամքը պարտ էին ջերմեռանդութեամբ և առանց կասկածական պայմանի նպաստ առնուլ բոլոր պատեհ դիպողութիւնքը լցուցանելու քրիստոնէական սիրոյ գործը և յանձն առնուլ ամենայն բան որ կը պահանջուէր նոցանից, ըստ իւրեանց կարողութեան չափուն։ Եւ, դիցուք թէ այս ընդհանուր քրիստոնէական սիրոյ հիմնական դաղափարը ներս կը բերէր միաբանութեան մէջ մի շփոթութիւն պարտականութիւնների և զբաղմունքի, բայց Յոսմինին մտածումէր որ եթէ Տիրոջ հոգին թագաւորումէր միաբանութեան անդամների մէջ, այդ դժուարութիւնքը հեռի կը մնային, օգնական լինելով մի կառավարութիւն, հաստատ և մեղմ միանգամայն... Մի՛ւս կողմից, դորանով յառաջանալու էին օգուտներ որ կարող չեն տալ աւելի սահմանափակ միաբանութիւնք... Աշխարհական քահանայքը և ժողովուրդը աւելի նեղ կապերով միմեանց հետ միաւորելու համար, միաբանութիւնը պիտոյ է, որքան կարելի էր, զգուշանայ կրկնուց իր մէջ և իր վերայ մի առանձնական ընկերութեան հոգի կամ արտաքին կերպարանք։ Ուրեմն, նորան պիտոյ չէր ունենալ ոչինչ սեփականութիւն, իբրև կրօնական և բարոյական մարմին, բայց նորա անդամքը պիտի մնան բաղաքացիք օրէնքի առաջև և մասնակից լինին նոյն պարտականութիւններին և նոյն իրաւունքին... Նոցա գոյքը լինելու էին մի խղճմտանքի բան իւրեանց և Աստուծոյ մէջ, նոյնպէս և նոցա հնազանդութիւնը և ժուժկալութիւնը ամուսնութենից։ Նոցա զգեստի ձևը և նոցա կեանքի եղանակը պիտի ձեռուտ լինէին այս նպատակիս, ուրեմն և չցուցանէին ոչինչ նորանշան կամ անսովոր բան։

Այս կազմակերպութիւնը իսկոյն պատճառ է տալիս մեզ բաղդատութիւն գործելու այն բանի հետ, որ միշտ յանդիման է կացուցուել իբրև ցի-

սուսեան կարգի հոգին, եթէ ոչ գրած օրէնքը։ Նա պարզ ու որոշ սահմանագրումէ, որ ոչինչ միատեսակ և ստիպողական եղանակ չպիտի կաշկանդէր քրիստոնէական սիրոյ միաբանութեան անդամներուն իշխանութիւնը։ Նոքա ընդունվումէն միաբանութեան մէջ այն պարզ պայմանով, թէ կամքին հնազանդութիւն մեծաւորին, քանի որ մասնակից էին դորան։ Երբեք հարկադրուցիչ չէ, որ նոքա պատկանէին մի մասնաւոր կարգի, և ոչ իսկ հրատարակէին ուխտեր. պատճառ, այդ հիմնարկութեան խորհուրդը է հաստատել որքան կարելի է, մի եղբայրութեան կապ շատ զանազան պաշտօններով և ասորժականերով մարդերի մէջ, այդպէս հրաւիրելով դէպ ի գործունեայ սպասաւորութիւն քրիստոնէական կրօնի, ամենայն տեսակ անձինք որ լցուցանումէին որ և իցէ օրինաւոր կոչումն։ Ուսումնականը, թագաւորութեան կառավարիչը, զինուորականը, ամենևքեան, Րոսմինիու կարծիքով, կարող են յառաջ տանել իւրեանց պաշտօնի գործերը և լինել միանգամայն գործունեայ անդամք այս կարգիս, առանց հրաժարուելու իւրեանց լինաւորութենից կամ թէ որով և իցէ կական մասնով խոտորուելու իւրեանց պաշտօնի պարտականութիւններից։ Մի հատ կանոն հասարակաց է նոցա ամենեցուն համար. այսինքն, նոքա բոլորեքեան ամեն մինը իւր աստպարէզի մէջ պարտական էին գործակից լինել քրիստոնէական և կաթոլիկեան սկզբունքը բարգաւաճ կացուցանելու, և մեծարանքով ուշադիր լինել մեծաւորի խրատներին։ Այսպէս Րոսմինին յոյս ունէր հաստատել մի զինուորեալ միաբանութիւն որ կարող էր յառաջացնել մի փրկաւէտ աղդեցութիւն և ծաւալել հասարակութեան մէջ նոր և կարող սերմեր երկիւղածութեան։ Այս էր — մի պէս կերպարանքով և մի, ժամանակի աղատ գաղափարների հետ կապակից հոգով — վերանորոգութիւնը այն կրօնական կարգի, որ Ցիսուսեան ընկերութեան անունով ցուցել է պէս տեսակ մեծ արդիւնք Հռոմի Պալատին։ Արդեօք, որ և իցէ կրօնական ընկերութեան կանոնաւոր գործողութիւն կարող է տակաւին ներգործել մի զօրեղ աղդեցութիւն այսօրուան քաղաքագործութեան վերայ. ահա մի խնդիր որ տալիս է վիճաբանութեան նիւթ. բայց, լուսաւիայլ է, որ այս էր Րոսմինիու խորհուրդը։ Նորա էականապէս եկեղեցական հոգին որոնուելը այս նոր հիմնարկութեամբ ճանապարհ բանալ տարածելու մի աստուածիմաստութիւն որ զուգահիւսած էր աղատ կարծիքների հետ, զոր օրինակ բռնակալ Լայոլան հնարաստեղծել էր իւր ընկերութիւնը, Հռոմի պալատի բացարձակ իշխանութիւնը անարատ պահպանելու. մի խորհուրդ որ երբեք մտած չէ Րոսմինիու դիտաւորութիւնների մէջ։ Սորանից հասկացան Եզուիտները թէ ինչքան պիտի վնասուէր և թուլանար իւրեանց աղդեցութիւնը, եթէ այս նոր կարգը արմատ արձակէր. այս էր պատճառը նոցա արմատացած ատելութեան դէպ ի «քրիստոնէական սիրոյ միաբանութիւնը»։ Եզուիտների միաբանքը հրապարակով նշանաւոր կացուցին իւրեանց անձը թէ իւրեանց ճառերով և թէ իւրեանց գրուածներով

որպէս կատաղի լորձոքիչը ամբաստանութիւնների ընդդէմ Բոսմինիոս գըրուածներին։ Նոցա ջանադրութիւնների անյաջողութիւնը դնելու նորա վերայ հերձուածողութեան կեղտ, վերջ չդրեց նոցա թշնամութեանը, և նոր կրօնաւոր ընկերութիւնը վեր կացրեց մի ընդդիմութիւն, որ բերեց նորա վերայ շատ ու շատ հալածանք, որ և մի քանի միջոց վտանգի մէջ դրեց նորա գոյութիւնը։ Հաւանական է, որ նա պաշտպանուեցաւ միայն բողոքին կործանման երեսից, այն անյաղթելի ներհակութեամբ որ ցուցանում Հռոմի պալատը, երբ որ հրապարակաւ պիտի անգործ կացուցանէր մի դատաւճիռ որ միանգամ տուել էր ինքը։ Կրօնաւոր ընկերութիւնը ստացած լինելով մի իշխանական քահանայապետի նուիրական հաստատութիւն, ունէր մի պապական հրովարտակ, որ հրապարակով մերժելու երկիւղ ունէր մի այլ պապ, որ և նախապատիւ կը համարէր ոչնչացնել նորա զօրութիւնը մի իշխանական գործողութեամբ որ չէր այնչափ կամահաճոյական։ Բայց առ հիմք հիմք Բոսմինեանցը յաջողեցաւ մի որոշեալ չափով յաղթութիւն ձեռք բերել ընդդէմ այնպիսի թշնամիների որ իւրեանց վերայ պարտք էին դրել սերմանել կասկածանք նոցա խորհուրդների և վարդապետութիւնների վերայ։ Նոցա առաջնորդ մեծաւորի աթոռանիստը հաստատուած է այժմ Հռոմի մէջ, և այս հրապարակական ընդունելութիւնը սուրբ աթոռի կողմից համարուում մի մեծակշիռ օգտաէաութիւն։ Այնու ամենայնիւ, նորա ենթարկուած են մի նախանձու և չարեացակամութեան, որ և պահանջումն նոցա կողմից շատ շրջահայեցութիւն և զգուշութիւն։ Մինչև այսօր իսկ խոհեմութիւն համարել չեն շատ շտապով հրատարակել Բոսմինիոս թողած գրչագիր գործերը։ Այդ ընկերութեան յառաջադիմութիւնը, բնական է, որ պիտի կաշկանդուէր այդպիսի ահարկու արգելարութիւններից։ Նա ունի այսօր շատ օթեւաններ Հիւսիսային Իտալիայի, Լոմբարդիայի և Պիեմոնտի զանազան մասների մէջ։ Այն օթեւանքը այդ ընկերութեան, որ մի քանի տարի յառաջ փակուած էին Աւստրիայում, այժմ վերստին բացուած են մասնաւորապէս։ Կան դոցանից երկու հատ Ֆրանսիայի մէջ. բայց Անգլիայում յատկապէս, ուր համարումն ոչ պակաս քան թէ եօթն ընկերատունք, գտանվում այդ միաբանութիւնը աւելի ծաղկեալ կացութեան մէջ։ Նա պարապում առաւելապէս հովուական սպասաւորութեամբ, առաքելութեամբք և ուսուցանելով դպրոցներում որ ըստ մեծի մասին պահվումին աշխարհական եղբարց համար։ Դժուար կը լինել ճշդութեամբ որոշել այն փոփոխութիւնքը որ այս կրօնաւոր հիմնարկութիւնը յառաջացուցել է արդէն եկեղեցւոյ ընդունուած վարդապետութիւնների մէջ։ Նորա հաստատութիւնը տակաւին նոր է։ Բայց ով որ ուշադրութեամբ նկատել է կրօնական և եկեղեցական վերանորոգութեան նշանները որ յառաջացել են Իտալիայի մէջ, կարող չէ ուրանալ, որ Բոսմինիոս գրուածքը և նորա հիմնարկած ընկերութեան ընդհանուր բնաւորութիւնը պատճառ եղել են կաթոլիկական հոգիների վերայ մի

նոր կարգ մտքերի, և ընդելացուցել նորանց ազատամիտ վերանորոգութեան գաղափարների հետ։ Մի և նոյն հոգին ցուցանումէն դարձեալ շատ հրատարակութիւնք նմանակից կարծիքների, Իտալիայի միւս կրօնաւոր միաբանութիւնների մէջ։

Խոլոր մենաստանական հիմնարկութիւններից բենեդիկտեանքը, առանց հակառակութեան, իրաւացի վայելումն ամենամեծ մեծարանք։ Այս կրօնաւոր կարգը միշտ երևելի է կացուցել իւր անձը առաքինական վարքով և ճշմարիտ ուսումնասիրութեամբ։ Գիտնական բենեդիկտեանց պատուոր աշխատութիւնքը ծանօթ են բոլոր բանագէտներին, և, Անգլիայում, հին օրի հոգին չէ պլանդակուել ի մէջ այժմեան միաբանների այս աղնիւ մենաստանների որ ելևէջք են առնում համալսարանական ընկերութիւնների հետ, Իտալիայի մէջ Մօնտէ կասինօ, Լա կավա, Սուբիակօ և միւս բենեդիկտեան վանքեր շատ անարատ պահպանել են իւրեանց գիտնական պարծանքը։ Խմացականութեան մշակութիւնը է նոյն և վայելչը եկեղեցական կոչման, ինչպէս այս կրօնաւոր կարգը տակաւին էապէս ցուցանումէ մեզ եկեղեցու բանասիրական խմաստութիւնը և հոգին։ Եւ արդ, ամենեցուն յայտնի իրողութիւն է, որ բենեդիկտեանց բերանով խոստովանած ու քարոզած կարծիքները այն ինդիրների վերայ, թէ ինչպէս պիտի կառավարուէր եկեղեցին, թէ ինչպէս պիտի լինէր քաղաքական կերպարանագործութիւնը միաւորած Իտալիայի, և առաւելապէս, թէ ինչ ասել էր Պապի աշխարհական իշխանութիւնը, այնպիսի բաներ էին, որ բենեդիկտեանքը մի քանի ժամանակ կասկածելի կացուցին իշխանութիւնների աչքում։ Այսպէս մանաւանդ Հանդիպեցաւ Մօնտէ Քասսինօյի մէջ, ուր, Բուրբօնեան իշխանների կառավարութեան օրերում, փակուեցան տպարանքը։ Հայր Տօստին, որպէս հաւանական է, ծայրագոյն անդամը այդ կրօնաւոր կարգի և մինը մեր ժամանակի գերազանց պատմաբաններից, մի քանի միջոց աքսորանքի մէջ ձգուեցաւ։ Այս երևելի միաբանութիւնը դարձաւ նիւթ մի չափած ու կշռած նախանձոտ հսկողութեան, և շատերը նորա աբեղաներից, զանազան միջոցներուն ձգուեցան բանտ։ Նոցա մէջ գտանուեր Հայր Ջեղիդիօ Պապատեսուէ, այսօր Թագակիր աբբայ Մօնտէ-կասսինօյի։ Բայց, որպիսի և լիներ կարծիքը որ բենեդիկտեանք կարող էին ունել պապի աշխարհական իշխանութեան վերայ կամ թէ մի վերանորոգութեան հարկաւորութեան վերայ, ոչ մի անկողմնաւոր հոգի որ ընտելացած էր նոցա գաղափարներին կամ թէ նոցա միաբանութեան գլխաւոր անդամների գրուածներին, ոչ մի րոպէ կարող էր կասկածամտութիւն իրեւ թէ նոքա կամին բաժանուիլ Հռոմի կաթոլիկեան եկեղեցուց։ Նոցա ազատ ձգտողութիւնքը հաւատարմապէս նկարագրած են Հայր Տոստիու գրուածների մէջ. նոցանից բացայայտուէ ոչ այլ ինչ, եթէ ոչ մի անկեղծ յօժարութիւն պահ բերելու ինչ որ եկեղեցական կարգադրութեան մէջ կարող էր արգելաւոր լինել իտալական կառա-

վարու թեան հիմնարկութեանը, այլև մի ամուր հաւատ դէպ ի այն միաբանութիւնը որ կարող է լինել մի երկիւղած կաթոլիկի պարտականութիւններին և մի աղատ տէրութեան աղատ հպատակի պարտականութիւնների մէջ։ Ով որ կարդացել է թէ «Պատմութիւնը Լոմբարդիական դաշնաւորութեան» Հպր Տոստիու գրուածը, որ նուիրած է այժմեան Պապի անուանը, և թէ պատմութիւնը Կոնստանտեան ժողովի, կամ թէ մի քանիսը այն փոքրաթերթ տետրակներից որ նա գրել է 1848 թուականին, կարող չէ չխոստովանել առ ի սրտէ, թէ այդպէս են այդ նորա աղատամտութեան սահմանքը։ Նորա կարծիքը չեն բերել նորա վերայ իւր կարգակից եղբարց դատապարտութիւնը. դորա հակառակ, նոցա հաւանութիւնը այդ կարծիքներին, այնպէս քաջ յայտնի է, որ Սուբիակոյի մենաստանը, որի սկզբնաւորութիւնը յետ է գնում մինչև Բենեդիկտոս, ենթարկուել է մի ամենևին առանձին հսկողութեան քահանապետական պօլիցիայի կողմից, իբրև կասկածելի հակառակորդ քահանայապետ իշխանի, մինչ Ումբրիայի և Նեապօլի մէջ նոյն կրօնաւոր կարգի շատ օթևաններ ազատ են մնացած այն հրամանից որ արգելումէր միւս մենաստանական հիմնարկութիւնները։

Ս. Նազարբեանց։

(Շարունակութիւնը միւս տետրակում.)

1. Հիսիսաւիայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Ինագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա զորաձադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր զանազան փիզիքական յայտնագործութիւնների, հասարակաւոր Աստեղաբաշխութեան, Քիմիայի, Հանքաբանութեան և Փիզիօլօգիայի վերայ. այլև բանասիրութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենցաղօգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Խարտական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. Թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութենից. այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը ստանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. Въ Редакцію Армянскаго Журнала «*Съверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. կամ թէ Մոսկվայի Նամակատանը այսպիսի հասցէով. Въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Одобрено Цензурою въ С.-Петербургѣ, 10 Августа 1862 года.